№ 91 ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍԻ 4

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍԻ 4 № 91

Տարեկան գինը 10 ռուբլի· կէս տարվանը 6 ռուբլի· առանձին հատորները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՕՊԵԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Եմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.

Տելեֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ"

ՀԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1907** ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տան և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տան ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնը)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՋԲՕՍԱՆՔ-ՀԱՃՈՅՔ

Նրանք, որոնք կիսահիւանդ, յոգնավատակ են, մանկութիւնից սակաւարիւն և սրանց հետևանք ունեն թոքերի, կրծքի, ժկանունքի, կոկորդի հիւանդութիւն, թուլակազմ են, նեարդները քայքայված՝ շարունակ տենդ ունեն, դիւրագրգիռ են, նիհարում են, ախորժակ ու հանգիստ քուն չունեն, ծանր հիւանդութիւնից յետոյ թոքերի մէջ մնացել է ախտ, հազում են, շնչասպառ լինում, շուտ յոգնում, մրսկոտ են, տաքանում, քրտնում են, շարունակ ունեն հարբուխ, լսողութիւնն օր-օրի վրա թուլանում է, կամ արդէն շատ ծանր են լսում, թոքերի ըորբոքումից յետոյ մնացել է բրօնխիտ, պլերիտ, վարակվել են Կօխի բացիլներով, ժառանգական թոքախտ ունեն,—հրաւիրվում են երեք ամսով մանակցել առողջապահական զբօսանք-հաճոյքին, որ կայանալու է առաջիկայ յունիսի 10-ից մինչև սեպտեմբերի 10-ը։

Հիմնովին ուսումնասիրած լինելով այն ըէժիմը, որը ապացուցանում է, թէ տուբերկիւլօզն անպայման բուժելի է, (եթէ սահմանից արդէն չէ անցել) և փորձով համոզված լինելով, որ նշանաւոր և տիեզերահռչակ պրոֆեսօր-բժիշկների դեղօրայքը ոչինչ են համեմատաբար այն հրաշագործ ըէժիմին, որով այժմս բժշկում են վերև թված հիւանդութիւնները՝ ցանկալի է, որ ձեռնհասները օգտվէին մեր երկրից գնացող այս առաջին առողջապահական զբօսանքից։

Ճանապարհը Պ կլաս ճեպընթաց, փառահեղ հաճոյք և անդորրութիւն։

Վճարը երեք ամսվայ համար 1000 ր.։ Սրա մէջ են՝ ճանապարհածախս, ուտելիք, բնակարան, բժիշկ, սանատորիա, կուրօրտ, զուարճութիւն և հաճոյք, թատրոն, երաժշտութիւն, մուզէյ, պատկերասրահ, նորութիւններ և այլն և այլն։

Աշխարհատեսութիւն՝ Գերմանիա, Բելգիա, Հօլանդիա, Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Տիրոլ և Աւստրիա։ Այս բոլոր երկրների նշանաւոր քաղաքներն ու վայրերը։

50 օր սանատորիաներում և կուրօրտներում **40** օր զբօսանք, հաճոյք և աշխարհատեսութիւն

Մասնակցել կամեցողները պէտք է մինչև այս մայիսի 20-ը պայմանաւորված լինեն, որովհետև արտօնված տոմսակների թիւը այդ օրը հաղորդվելու է Լօնդոն և սրանից յետոյ վճարը կարող է շատ մեծ տարբերութիւն անել։

Մանրամասնութիւններն ամեն օր երեկոյեան ժամը 6 և կէսից մինչև 7 և կէսը տեղեկանալ պ. Տիգրան Նազարեանից։

Тифлисъ, Контора редакціи Агбюръ-Таразъ, Мадатовская, 5.

առ. (օրամէջ) 1—10

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կօպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը ժ. 11—5 ժ.

ՐՈՒԴԷՆՕ.—Ներքին հիւ. կրծքի 3—4 ժ.։

ԵԱՆԶԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բերանի, ամեն օր ժ., 2—3։

ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ. ամեն օր 2—3 ժ.։

ԲՕԶՈՒԱՆՆԿԻ.—Երեխ. ամեն օր 4—5. բացի շաբ. և կիր.։

ԳՕՐՕՌՅՕՎԱ.—Մասնաժ. ամեն օր 11—5։

ԱՍՊԻՏՕՎ.—Ականջի, բերանի, քթի. երկ., երեք., շաբ. 1—2, չորեք., կիր. 12—1։

ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., ամեն օր, 1—2 բացի կիրակի օր։

ՊԱՒԼՕՎԱԿԻ.—Վիրաբ. ամենայն օր 12—1։

ԳՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին, ամեն օր 1—2։

ՆԷՈՒՑՄԻՆ.—Աչքի, երկ., չոր., հինգ., ուրբ., 12—1։

ԻՆԱԵՎ.—Կանանց, ամեն օր 4—5

ԿԷՆ բժ. ԻՕՍԵԼԻԱՆԻ.—Կանանց երկուշ., չոր., հինգ. ուրբ., կիր. 11—12։

ՏԵՏՐԱՅԷՆ.—Կաշուի, վեներ. ամեն օր 1—2

ԲՕԳՈՄՈԼՈՎԻ.—Ներքին հիվանդով, ամեն օր 4—5։

ՄՕՆԵՄ.—Երեխ. երեքշ, հինգշ, շաբ., 4—5 ժ.

ՆԵԶՈՐՕՎՆԱ.—Ատամի հիւ. ամեն օր 11—5, կիր. 1—3։

ՊԻՆԱՐՍԿԻ, ԶՈՒԲՈՎՍԿԻ } Կլինիքական անալիզներ։

Բժշկական համախոհուրդներ, մասնաժ, սրբոկումն, անդամահատութիւն անալիզ, հիպնօզ, սանատորիաների և ոգասարանների քննութիւն—ըստ համաձայնութեան։

առ. (չ. ու. կ). 93—143

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՄԱՍՆԱԳԷՏ

սիֆիլիս, միզային, վեներական եւ մորթու հիւանդութիւնների։

Ընդունում է ցերեկ. 1—3 ժ., երեկ. 6—8 ժ.

Սօլօլակ, Բեհբութեան փող. № 33։

(ա. օ.) առ. 50—50

Լոյս տեսաւ եւ ծախվում է

ԱՐԵԱՆ ՋԱՅՆԵՐ

երրորդ տպագրութիւն

փոփոխված, ճոխացրած, 224 երես

ԳԻՆԸ 50 ԿՕՊԵԿ

Դիմել՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» և «Փարոս» գրախանութները, Երևան՝ Ս. Օհանջանեանին, Բագու՝ Բունիաթեանցի գրախանութը հայոց եկեղ. կից, Կարս՝ Եղբ. Մկրտումեաններին։

Մեծ քանակութեամբ գնողներին զեղչ զեղչ։ Ստ. Մ.-Սողոմոնեան, Тифлисъ Успенская ул. № 3.

(ա. օ.) առ. 8—10

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

„Երիտասարդ դաշնակցուր."

Հրատարակութեամբ

1. Մրաւեան, Դաշնակցութեան կրեդիսը 15 կ.
2. Լեվիս, «Ի՞նչ են ցանկանում սօցիալիստները» . . . . 3 կ.
3. Բիլիարդ, «Ինչու՞ ենք անջատւում Դաշնակցութիւնից» (բաց նամակ դաւառացի ընկերոջ) . . . 3 կ.

Պատրաստ են տպագրութեան համար մի շարք գրքեր, որոնք լոյս կը տեսնեն հետզհետէ։ Ցանկացողները կարող են դիմել՝

Баку, Книжный магазинъ «Сотрудникъ». Ольгинская ул. առ 5—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օգնութեան գործը. Վերջին տեղեկութիւններ. Մի հաղորդագրութեան առիթով. Պետական Խորհուրդ. Պետական Դումայի շուրջը. Մամուլ. Մեռնող ազգութիւն. Պետական Դումայի շուրջը. Մայրաքաղաքի կեանքից. Տաշհներ. Կանոնաւոր չափահասների համար դասընթացքներ. Լուսանկարիչ Քիւրչեանի նեգատիվները. Ուղիղ է արդօք. Նամակ Վաղարշապատից. Դատութեան բաժակը. Նամակ Կարսից. Նամակ Երևանից. Նամակներ խրբաքարութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՂԵՐԻՆ. Թաւրիզի հայուհեաց ընկերութիւնը. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Դարվինի մեխանիկացման։

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

I

Մենք հաղորդել ենք տեղեկութիւններ Էջմիածնի գաւառի Աբարանի շրջանի կարօտեալների մասին։ (Տես Մշակ №№ 82, 87)։

Նպաստամատոյցը յատկացրեց Աբարանի համար 10,000 ռուբլի, որը ուղարկվեց Երևանի փոխանորդ Յուսիկ եպիսկոպոսին բաժանելու կարօտեալներին տեղական ներկայացուցիչների ձեռքով։

Կազմվեց մի յատուկ, տեղական յանձնաժողով, որի մէջ մտան Աբարանի գրագիտակալ Տէր-Խորէնը, Աշտարակի Տէր-Թադէոսը, Օշականի աւագ ուսուցիչ Վ. Տէր-Մաչարեանը, Աշտարակի աւագ ուսուցիչ Ս. Գրիգորեանը և իւրաքանչիւր գիւղից երեքական ներկայացուցիչներ։

Օգնութիւն կարելի էր անել կամ ուղիղ փողը յանձնելով գիւղացիներին, կամ թէ տալով նրանց հացահատիկներ։

Աչքի առաջ ունենալով ժամանակի սղութիւնը, այլ և այն հանգամանքը, որ իրանք գիւղացիները, իբրև ամենիմպատ շահագրգռվածներ, աւելի հեշտութեամբ կը գտնեն թէ ուտելու և թէ սերմանելու պաշարներ, այլ և հնար կունենան իրանց անային անասուններով և սայլերով բերել գիւղ գնած մթերքները, որոշվեց տալ նրանց փող։

Ընդամենը նպաստ բաժանվել է 12 գիւղի, որոնց կարօտեալների թիւը հաշված է 7239 հոգի։

Իւրաքանչիւր շնչի տրվեց 1 ռուբլի 39 կօպէկ, որ մերձաւորապէս համապատասխանում է մի պուդ հացահատիկի (ցորեն, գարի, կորէկ և այլն)։

II

Առաջ ենք բերում նպաստ ստացած գիւղերի անունները և նրանց բաժանված գումարների քանակը։

1	Ղազանչար	1440	շունչ	2001	ռուբ.	60 կօպ.
2	Բաշաբարան	1400	»	1946	»	— »
3	Շիրակալա	1080	»	1501	»	20 »
4	Ամնագեղ	840	»	1168	»	60 »
5	Բազարջուղ	540	»	750	»	60 »
6	Բլեղ	568	»	720	»	2 »
7	Ղալաչա	490	»	681	»	10 »
8	Սաչու	365	»	507	»	35 »
9	Ղարանլուխ	280	»	389	»	20 »
10	Ղուշչի	156	»	216	»	84 »
11	Իլանչան	100	»	139	»	— »
12	Սաղմոսավանք	30	»	41	»	70 »
		7239	»	10,062	»	21 »

Այս ցուցակը տարբերվում է այն նախնական ցուցակից, որ կազմված էր կարիքը որոշելու նպատակով։ Ստուգութիւնը պարզել է նոր հանգամանքներ։ Բացի այդ ուշադրութեան է առնվել պետութեան կողմից բաժանված նպաստը, որից զուրկ են մնացել մի քանի գիւղեր։

Ներկայացրած աղիւսակից երևում է, որ նպաստ տրվել է աւելի՝ քան նշանակված է եղել։ Աւելորդ 62 ռուբլին հոգացվել է տեղական հանգանակութեամբ։

Նպաստ ստացած գիւղացիները մտադիր են գնել մթերքներ թէ մերձակայ գիւղերում, թէ Շիրակում և թէ Էջմիածնի գաւառի տափարակում։

Ա. Ռ.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանձակ, 2 մայիսի

Մի վաթսունամեայ սիսիանցի հայ անձնասպանութեան փորձ էր արել՝ վերցրեց դանակով բանական տեղ կտրելով։

Վրա հասնող պրիստաւի և կողմնակի մարդկանց ներկայութեամբ անձնասպանը դրաւոր յայտնեց, որ ինքն է իրան ուզեցել սպանել՝ չքաւորութիւնից ստիպված։

Աւ. Սահակեան

«Մշակ»-ի և «Իրշադ»-ի թղթակիցների վերջին օրերի տուած տեղեկութիւնները Գանձակից, ապրիլի 24-ին երկու դրացիների մէջ տեղի ունեցած հրացանաձգութեան վերաբերեալ, ինչպէս լսեցինք, հոգսեր է պատճառել Թիֆլիսում գտնվող գանձակեցիներին։

Աւելորդ չենք համարում յայտնել, որ հայերի և Թուրքերի յարաբերութեան ոչ մի լարումն կամ թշնամութիւն առաջ չը բերեց այդ դէպքը և երկու հարևանները բարեկամական յարաբերութեան մէջ են գտնվում։

Սագան

Շրջակայ գիւղերից տատնեակ սայլերով թափված են Գանձակ և ուտելու հաց են պահանջում. միանգամայն անտանելի և յուսահատական է գիւղացի չքաւորների դրութիւնը։

Տեղական Աղքատախնամ յանձնաժողովը, իր ձեռքի տակ միջոցները սպառված լինելով, դիմել է Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովին և նպաստ է խնդրում։

Վերջին օրերս գաղտային մասում առատ անձրև տեղաց, որը մեծ պարգև է բուսականութեան։

—

Կ. Պոլսի լրագիրները հաղորդում են, որ մեռել է Թիւրքահայ յայտնի գրական, դպրոցական գործիչ Ռէշիդ Պէրպէրեանը, որը Թիւրքահայոց գրականութեան, ուսումնական կեանքի մէջ խաղացել է անագին դեր։

Նա վարում էր մի միջնակարգ դպրոց, տասնեակ տարիներից ի վեր, և հացրել է մի քանի սերունդներ։ Մի ուրիշ անգամ մենք կը խօսենք նրա մասին մանրամասնաբար։

ՄԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Ներկայ գարնան արտասահմանում տեղի ունէր դաշնակցական գործողների ընդհանուր ժողով։

Քննութեան առարկայ էին դարձել ծրագրական մի շարք կէտեր և գործելակերպի մի քանի խնդիրներ։

Ժողովի նիստերում հանդէս եկան զանազան հասանքների պրապայմանութիւններ և հարց ծագեց նոր ճիւղաւորութիւնների մասին։

Մենք ոչ մի յօդուած, ոչ մի նկատողութիւն չը ապեցինք այդ ժողովի մասին կամ նրա առիթով, համարելով նրքան մի ժողով, որ տեղի ունի արտակարգ պայմաններում և որը զբաղված է ներքին կուսակցական ինքնորոշման հարցերով։

Ժողովը վերջացել է և նրա որոշման մասին «Փայլակ» լրագիրը հրատարակել է հետևեալ հեռագրական տեղեկութիւնը.

Դաշնակցութիւնը շարունակելու է գործունէութիւնը Թիւրքիայում յանուն ժողովրդի ազատագրութեան և կովկասում, ղեկավարվելով սօցիալիստական աշխատաւորական սկզբունքով և յեղափոխական տակտիկով։

Որքան էլ սեղմված լինի այս ձևակերպութիւնը և կարօտ մանրամասն մեկնութիւնների, այնու ամենայնիւ որոշ գաղափար է տալիս այն ընդհանուր էութեան մասին, դէպի որը յանգել է ժողովը։

Եւ ահա այժմ այդ ձևակերպութիւնը կը դառնայ որոշող մի գործօն դաշնակցական համախմբումների համար։

Ով համաձայն է այդ ձևակերպութեան՝ կը դառնայ նրա ուխտեալ իրագործողը իր գործունէութեան մէջ, իսկ ով չէ համակրում նրան, նա կը մնայ նոր համախմբումների մէջ։

Կան, օր., մարդիկ, որոնք չեն ուզում և Թիւրքիայի և Ռուսաստանի վերաբերեալ խնդիրները խառնել միմեանց հետ, կան գործողներ, որոնք չեն ցանկանում ազգային ժողովրդական դատը կապել սօցիալիստ-յեղափոխական գործակերպի հետ։ Այդպիսիների համար դաշնակցական ընդհանուր ժողովի ձևակերպութիւնը անբաւարար է և նրանք պէտք է դան իրանց կազմակերպութիւնից դուրս։

Անեն մի քաղաքական ծրագիր սրբութիւն է այն մարդկանց համար, որոնք նրան դաւանում են իրանց խորին համոզմունքով և ամբողջ աշխարհահայեացքով։ Եւ երբ կուսակցութեան ծրագրի և նրա գործողների մէջ կայ բնական և մտերմական այդ կապը, այն ժամանակ կուսակցութիւնը ազատ է մնում ներքին հակասութիւններից և թիւրիմացութիւններից։

Եւ ահա դաշնակցական կոչված ստուար ազգութեան մէջ այժմ հանդէս կը գայ այն հարցը, թէ որքան համապատասխան է նրանց հայեցակէտներին այն ձևակերպութիւնը, որ տալիս է արտասահմանեան ընդհանուր ժողովը, ցանկանում են արդեօք վերցնել իրանց վրա Թիւրքիայի և Կովկասի գործունէութիւնը, մտադիր են զբաղվել Կովկասում սօցիալիստական գործունէութեամբ, յեղափոխական տակտիկով։ Ով կը ճանաչէ այդ ձևակերպութիւնը իբրև սրբութիւն, նա կը դառնայ նրա անձնուէր քարոզիչը և գործողը, իսկ ով չի ճանաչի նրան իբրև սրբութիւն, ազատ կը լինի նրան ծառայելու բարոյական պարտաւորութիւնից։

Դաշնակցութեան ընդհանուր ժողովի ձևակերպութիւնը մտցնում է որոշութիւն մի քանի մէջ, որը միայն այժմ բարդ և հակասական մեկնութիւնների ու բացատրութիւնների առարկայ էր լինում և ընկած էր հասարակութեան առաջ իբրև մի առեղծուած, իբրև մի հանդոյց։

Այժմ իւրաքանչիւր մարդ կը դիտենայ թէ նա ում հետ գործ ունի և ինչ կարող է սպասել այս ու այն կազմակերպութեան գործունէութիւնից։

Հեռագրական հաղորդագրութիւնը, որ տալիս է «Փայլակ»-ը, տալիս է և հետևեալ տեղեկութիւնները.

Նեղված են համերաշխութիւն օտարազգի յեղափոխականների հետ և ֆեդէրացիա ազգային հարցի վերաբերութեամբ։

Մշակված է ծրագիր և կանոնագրութիւն։ Հետևեալ ընդհանուր ժողովը նշանակված է 1908 թ.-ին։

Այստեղ մենք կարևոր ենք համարում վերջին կէտը, որը խօսում է հետևեալ ժողովի մասին։ Անշուշտ այդ ժողովը անհրաժեշտութիւն է, որովհետև ներկայ չորրորդ ընդհանուր ժողովի ձևակերպութիւնները առաջ կը բերեն բազմաթիւ թեր և դէմ կարծիքներ, գուցէ և պառակտումներ դաշնակցական գործողների մէջ և առաջարկ կը մղեն մի շարք խնդիրներ քննութեան համար։

Մենք բաւականացանք այն հաղորդագրութիւնով, որ տալիս է «Փայլակ» լրագիրը։ Առայժմ աւելին չենք կարող հաղորդել։

Երբ ապիթը կը ներկայանայ, մենք կը վերադառնանք այս խնդրին։

Ա. Ռ.

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի։ Նիստը բացվում է ժամը 2 և 4 րօպէին Ակիմովի նախագահութեամբ։ Հերթին գրված է մասնաժողովի զեկուցումը այն մասին, որ սենատը դժուարութիւնները է գտել հրատարակելու Պետական Խորհրդի ընդունած նակազը, որով մասնաժողովը առաջարկում է ուկազից դուրս ձգել երկու յօդուած, մէկը խորհրդի մասնաժողովի մէջ էքսպէրտներ հրաւիրելու, միւսը Պետական Խորհրդի նախաձեռնութեամբ օրինագծեր կազմելու համար մինիստրի ձեռքով ժամանակաւիջոց նշանակելու մասին։

Մտքերի փոխանակութիւնից յետոյ Խորհուրդը ընդունում է մասնաժողովի առաջարկութիւնը ձայների ճնշող մեծամասնութեամբ։

Ապա յայտարարվում է միջարար, որից յետոյ կրկին նիստը վերսկսվում է. մինիստրների շարքումն է այս անգամ մինիստրների խորհրդի նախագահը, իսկ ներքին օթեակում նստած է Պետական Դումայի նախագահ Գուչկովը։

Խորհուրդը անցնում է քննելու Դումայի ընդունած պատերազմա-դաշտային դատարաններ հաստատելու մինիստրների խորհրդի որոշումը վերացնելու օրինագիծը։

Կրակոտ և վառ վիճաբանութիւններից յետոյ Խորհուրդը հաստատեց դիմումը—պէտք է ընդունել Դումայի օրինագիծը, թէ՞ ոչ։ Քաղաքների ատաղին մեծամասնութեամբ որոշվում է չընդունել։

Նախագահը յայտարարում է, որ մի փոքր ժամանակ նիստը դադարի է լինելու մի քանի յայտարարութիւններ լսելու համար։ 10 րօպէի դադարից նիստից յետոյ նիստը վերսկսվում է և փակվում է ժամը 6 և 40 րօպէին։ Հետևեալ նիստի մասին կը յայտարարվի առանձին։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

(Հեռագրով)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի։ Դումայական ազգային ժամանաժողովը ձեռնարկեց քննելու պրէզիդիումի մշակած մանամաժողովների պարապմունքների ծրագիրը։

Դումայի հօթերորդ բաժինը խօսեց յօգուտ նօվգօրօդի նահանգի ընարութիւնները վերացնելուն, բացի գիւղացիական կուրիալից։

Դումայական մտակարարական մանամաժողովը որոշեց միջնորդել անպայմանապէս յատկացնելու 17 ½ միլիոն մատակարար օգնութեան ներքին գործերի մինիստրութեան մատակարարողների հետ հաշիւները վերջացնելու համար։

ՄԱՄՈՒԼ

—

Եթէ յիշում են մեր ընթերցողները, Պետական Դումայում անդրդներին օգնութիւն հասցնելու հարցը քննելիս խորը վիճաբանութիւններ տեղի ունեցան այն հարցի մասին՝ թէ ինչպէս կազմակերպել այդ գործը։ Կազմվեց այդ նպատակով մի մանամաժողով, սակայն այդ մանամաժողովի գործունէութեան մասին հէնց սկզբից յուսահատութեամբ էին վերաբերվում։ Նրան յանձնարարված էր գտնել այն աղբիւրները, որոնցով կառավարութիւնը պէտք է օգնէր անդրդներին և պարզել այդ օգնութեան ձևն ու եղանակը։ Միևնոյն ժամանակ նրա վրա պարտք էր դրված բազմակողմանի կերպով ուսումնասիրել անդրդութեան հիմնական պատճառները, հաւաքել տեղեկութիւններ անդրդների մասին և այլն։ Այնպէս որ դրա համար կազմված յատուկ մանամաժողովը ոչ միայն պէտք է լուծէր անհրաժեշտ բիւջէի հարցը, այլ և կազմակերպէր մի ընդարձակ անկեանային աշխատանք։ Այդ մանամաժողովը գործում է այնպիսի անոգաստ պայմանների մէջ, որ ոչ մի արդիւնք չէ կարողանում ցոյց տալ և բնականաբար այսօր հարց է ծագում նրան լիկվիդացիայի ենթարկելու։

Այդ խնդրի առիթով Ն. Իօրդանսկին «Рус. Вѣд.» լրագրում ասում է.

Մանամաժողովը առաջին հերթում ուզեց պարզել զոյութիւն ունեցող կարիքի չափը, այսինքն կատարել անկեանային աշխատանքի այն մասը, որը անհրաժեշտ է բիւջետային խնդրի լուծման—անկեանգիլի գումարները յատկացնելու համար, ինչպէս որ յանձնարարված էր մանամաժողովին։

Բայց և այնպէս այդ աշխատանքն էլ մանամաժողովի համար անհնարին էր և ոյժից վեր։

Զուսնենալով ձեռքի տակ անհրաժեշտ նիւթեր, որով կարողանար դեկավարվել բիւջետի խնդիրը լուծելիս, անդրդներին օգնութեան միջոցները յատկացնելու համար, մանամաժողովը լրագրական յայտարարութիւններով դիմեց բոլոր հաստատութիւններին, բաւորական պրոֆէսիոնալ միութիւններին, անդրդների կոմիտէներին, առանձին անհատների խնդրելով նրանց տալ տեղեկութիւններ անդրդների թիւ և այն տեղերի մասին, ուր աւելի են համախմբված նրանք և այն միջոցների մասին, որոնք մինչև այժմ ձեռք են առնված եղել անդրդների դէմ կռուելու համար։ Զեմստվոներից և քաղաքներից հատատատասխան տեղեկութիւններ հնարաւոր եղաւ պահանջել միայն ներքին գործերի մինիստրութեան միջոցով։ Դրանից յետոյ ստացված տեղեկութիւնները հաս ուկտոր էին և անբաւարար։ Առնտրի և արդիւնաբերութեան մինիստրութիւնը, որին նոյնպէս դիմել էր մանամաժողովը, պատասխանեց, որ նրա մօտ կան տեղեկութիւններ միայն սաստկաներին մասնակցող անձնց քանակութեան մասին, իսկ անդրդների մասին տեղեկութիւններ չունի։

Այդպիսի պայմաններում աշխատանքները գոնէ մի փոքր առաջ տանելու նպատակով մասնաժողովը ստիպված էր անել երկրորդ մէկը. կամ հրաւիրել գործին լաւատեղեակ սարդիկ իր նիստերին ու աշխատանքներին մասնակցելու և կամ իր անդամներին ուղարկել պատշաճաւոր տեղերում հաւաքելու հարկաւոր տեղեկութիւնները։

Մասնաժողովը վճռեց նախ փորձել առաջինը, որ թուում էր աւելի քիչ պէտք է դիմադրութեան հանդիպէր։

Մասնաժողովը որոշում է քննել նախ Պետերբուրգի անդրդների դրութիւնը և այդ նպատակով հրաւիրում է տեղական մի քանի յայտնի հմուտ գործիչներ։ Սակայն նրանց թոյլ չեն տալիս ներս մտնելու Տաւրիկեան պալատը, մասնաժողովի աշխատանքներին մասնակցելու։

Այդպիսով, —ասում է Իօրդանսկին,— զրկված լինելով հմուտ և լաւատեղեակ մարդկանցից անհրաժեշտ տեղեկութիւնները ստանալու հնարաւորութիւնից, ոչ մի օգնութիւն, անհրաժեշտ նիւթեր չը ստանալով մինիստրութեան կողմից նոյնպէս, մասնաժողովը անկարող եղաւ յիշեալ եղանակով կազմակերպել անկեանային ուսումնասիրութիւնը։ Աւելի ևս նուազ իրագործելի է նրա համար, կառավարական ներկայ օպեկայի, հնամաանութեան մեծ-մեծ և միւս եղանակը—տեղեկութիւններ հաւաքել մասնաժողովի անդամների միջոցով իրանց տեղերում։ Այդ եղանակը էլ աւելի է կասված ու երկիւղ ներշնչում իշխանութեանը։

Ուստի մասնաժողովը ներկայումս զուրկ է որևէ հնարաւորութիւնից կատարելու հարկաւոր անկեանն, հաւաքել անհրաժեշտ տեղեկութիւնները, և հէնց դրանով էլ զրկված է իր վրա դրված պարտականութիւնը կատարելու հնարաւորութիւնից։

Այդ հանգամանքը երբի առիթ կը տայ Դումային նորից զբաղմունքի նիւթ դարձնելու անդրդների օգնութեան հարցը։ Բայց եթէ այդպիսի մի մասնաժողովի առաջ խոչընդոտներ են տեղծում, ինչպիսի կոնֆլիկտների կը հանդիպէր օգնութեան այն ձևը, որ առաջարկում էին ծայրայեղ ձախակողմեանները։

Թժուար չէր այդ նախատեսել...

*

Սահմանադիր-ռամկավարների բռնած դիրքը լեհական ինքնավարութեան մասին, որ արտայայտված էր գլխաւորապէս «Рѣчь» լրագրում յոյս տեսած քննադատութեան մէջ, զանազան թեր և դէմ խօսակցութիւնների առիթ է տալիս. առիթ է տալիս նոյն իսկ ենթադրելու, որ կօլօն այսուհետև Դումայում կադետների նկատմամբ թշնամական վերաբերմունք ցոյց կը տայ, նրանց հետ համերաշխ չի գործի։ Աւելորդ է ասել, որ վաղաժամ է այդ ենթադրութիւնը։ Պետերբուրգի «լեհական գաղութի յայտնի անդամներից» մէկը, «Ludzkosci» լրագրի առաջարկութեամբ, հետևեալ կերպով է որոշում կադետների վերաբերմունքը դէպի լեհական ինքնավարութիւնը, որ լեհական հասարակութեան մէջ զանազան խօսակցութիւնների առիթ է տուել։

Կադետները Լեհաստանի ինքնավարութեան հարցում ամենևին չեն նահանջի իրանց ընտրած դիրքից։ Նրանք դեռ սկզբից ասում և կրկնում էին, որ «ինքնավարութիւնը պէտք է ժամանել Լեհաստանում ընդհանուր ռամկավարական բարենորոգումների մրցունակ անմիջապէս յետոյ»։ Այդ տեսակէտից ոչինչ չէ փոխվել։ Համբրոնոզութեան տարբերութիւնը ամենևին կախված չէ Լեհաստանի վերաբերմամբ յանձնառած այդ quasi-պարտաւորութեան ձևական կողմից, այլ միայն քաղաքական տակտիկից։ «Ժողովրդական ազատութեան կուսակցութեան» պատուլատը կարելի է արտայայտել հետևեալ ձևով. մենք կողմնակից ենք ամենայն ինքնավարութեան, բայց կարծում ենք, որ նա օրգանապէս շաղկապված է ամբողջ պետութեան ռամկավարական սահմանադրութեան հետ։ Սահմանադրական իրաւունքները իրագործելուց յետոյ միայն կարելի է ձեռք բերել և ինքնավարութիւն Լեհ. թագ. համար։»

Բացի այդ հանգամանքից կան և ուրիշները։ Պետական Դումայում մի քանի խմբակները չէին ցանկանում, որ Լեհաստանի ինքնավարութեան հարցը քննվի ազգաբական օրէնքը ընդունվելուց առաջ, որի շնորհիւ մեծամասնութիւն չէր կարող ստացվել։ Միևնոյն ժամանակ «կօլօն» ժամանակին չէր նախազգուշացրել կադետներին իրանց դիտաւորութեան մասին, չէր ծանօթացրել նրանց իրանց օրինագծի բովանդակութեան հետ և, իհարկէ, հող էլ չը կար պատրաստված Դումայում այդ հարցի մասին։ Ցամենայն դէպս կասկած չը կայ, որ կադետները աջակցութիւն ցոյց կը տան լեհական ինքնավարութեան ընդունելութեան գործում։

ՄԵՌՆՈՂ ԱԶԳՈՒԹԻՒՆ

I

Կան մահվան դատապարտված հիւանդներ, որոնք չեն հաւատում իրանց դրութեան վըտանգաւորութեան մասին և սիրում են ինքնախաբէութեամբ օրօրել իրանց ապագայ երջանկութեան ցնորքներով։ Այդպիսի ծանր հիւանդները սովորաբար խուսափում են իրանց հիւանդութեան բուն պատճառների մասին ամբողջ ճշմարտութիւնը իմանալու անախորժութիւնից։ Այդ երանելիները գերադասում են հանգիստ ապէտ կամ շաւասան «փրկիչների» խորհուրդներին ու դեղատոմսերին և իրանց ամբողջ ուշադրութիւնը դարձնել հիւանդութեան արտաքին երևոյթներին—սիմպտոմների վրա։ Հիւանդութեան բուն պատճառները իմանալով դուցէ հիւանդը կարողանար այնպէս փոփոխել իր կեանքի պայմանները, որ ինքը ընութիւնը օգնութեան հասնէր նրան, բայց նա անգիտանալով այդ ճշմարտութիւնը շարունակում է իր յոյսը դնել շաղատանների ֆոկուսնիկութիւնների և լատինական խոհանոցի հրաշքների վրա, մինչև որ մահը վրա չէ հասնում և իր դատավճիռը կարդում։

Այդպիսի մի ծանր հիւանդի դրութեան մէջ է հինաւուրց «կուլտուրական» ազգն հայոց, որ վերջին քառորդ դարում իր բուժումը յանձնել է իրանց անասման տգիտութեան և ինքնահաւանութեան մէջ խիզախ մի խումբ «փրկիչների»։

Երկրագնդիս ամենաազատ կարգերի մէջ անգամ հայ ազգը չէ բուժվում իր ցաւերից։ Ամերիկայում, Լօնդոնում, Հնդկաստանում, Եգիպտոսում, Պարիզում, Բոլգարիայում հայութիւնը նոյն հիւանդութիւնների է ենթակայ, ինչ որ նկատելի են նրա այն հատուածներում, որոնք ապրում են Թիւրքիայում, Պարսկաստանում, Ռուսաստանում. սոմնանբարական կարգերը և թէ բռնակալական բժիշը չէ փոխում այդ հինաւուրց կուլտուրական ազգի սեփական գործերը անօրինելու անմիտ, բարբարոս, կամայական խայտառակ ձևերը, նրա ազգային-եկեղեցական անօրինակ շինվածքը, բայց չը նայած դրան՝ «փրկիչները» մի գլուխ «դրսի անհնազան պայմաններով» են մինթարվում և արդարացնում ներսի ապիկարութիւնները և շարունակում իրանց շաւասանական յուսադրումները, սպանութիւնները, դրամաշորթութիւնները, բռնութիւնները և իմաստակ պոռոտախօսութիւնները ի փառս իրանց նորահնար բժշկութեան։ Դուրս է գալիս, օրինակ, որ եթէ 60—70 տարի շարունակ էջմիածնում տիրում են ամենախայտառակ անկարգութիւններ—դրա միակ պատճառը... ռուս բիւրօկրատան է. իսկ թէ ինչու յար և նման խայտառակութիւնները սովորական են նաև Լօնդոնի, Պարիզի, Ամերիկայի, Եգիպտոսի հայ գաղութների ներքին կեանքում—դրա մասին սիրում են լռել այն փրկիչները, որոնց բարբարոս շահատակութիւններից ամաչում են Լօնդոնի, Պարիզի, Նիւ-Եօրկի կամ Ալէքսանդրիայի հայաբէր օտարները։ Այնմեղ էլ մեղաւորը ռուս բիւրօկրատներն են կամ սուլթանական բռնիչը։ Պարզ է, որ հինաւուրց «կուլտուրական» ազգի առանձնայատուկ խայտառակասիրութեան բուն պատճառները պէտք է մի այլ տեղ փնտռել, իսկ դրա համար դինված անխնայ ճշմարտասիրութեամբ, ինչպէս մի անատոմ, նախ և առաջ վերլուծենք հայութեան կազմուածքը։

Անկախ

(Կը շարունակվի)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Զատկական արձակուրդներից յետոյ «աշխատաւորականները» վերադառնալով յայտնում են, որ իրանց բռնած պարլամենտական տակտիկան հաւանութեան է հանդիպել ընտրողների կողմից, բացի խմբակի վերջին քայլից նորակոչ զինուորների հարցում։ Ազգաբնակութեան տուած ընդհանուր նշանաբանն է.—«Պահպանեցէք Դուման, այնպէս միք անի, որ արձակեն»։

—Ոստիկանական դեպարտամենտի սառացած տեղեկութիւններից երևում է, որ Թիֆլիսի պատգամաւոր Զոհրաբեանի կեանքին լուրջ վտանգ է սպառնում։ Ոստիկանական դեպարտամենտի կարգադրութեամբ Պետերբուրգի գաղտնի ոստիկանական բաժանմունքը մտադիր է ժողովական գործակալ նշանակել պատգամաւոր Զոհրաբեանի պահպանութեան համար։ («Парусъ»)

—Աշխատողական պատգամաւորների ագիտացիան իրանց տեղերում, յօգուտ Դումայի արձակման, ամեն տեղ էլ անաջողութիւն կրեց։ («R. M.»)

—Դումայի շրջանների նախապատրաստութիւններ են տեսնվում կենտրօնական խմբակների միութիւն կազմելու նպատակով։ Սպասում են, որ այդտեղ կը մտնեն կադետները, ձախակողմեան հոկտեմբերականները, ազգայնականները, գիւղացիական խմբակները, մուսուլմանների ֆրակցիան և լեհական կօլօն։ Կազմակերպվում է միջկուսակցական մի կենտրոնական համաձայնութեան պայմանները մշակելու համար։ Աշխատանքի դեպքում կենտրոնը վերջնականապէս կը բաժանվի ձախակողմեան խմբակներից։ («Ю. Кр.»)

—«Нов. Вр.»-ի ասելով, «Զոհրաբեանի արիթով ստեղծված միջադէպը այնքան խիստ ազդել է Պետական Դումայի նախագահ Ֆ. Ա. Գօլօվինի վրա, որ նա հանգստութեան մեծ կարիք է զգում»։ Լրագիրը ասում է, որ անհրաժեշտ է Գօլօվինին փոխարինել, և այդ նպատակով առաջ է քաշում Մակլակովի թեկնածութիւնը, յայտնելով, որ նա աշխատութիւն կը գտնի թէ չափաւորների և թէ աջակողմեանների կողմից։

«Рѣчь» լրագիրը անհիմն է համարում Գօլօվինի հրաժարական միտքն անգամ, «որը, լրագրի ասելով, երկու ամսվայ նախագահութեան ընթացքում ամեն ջանք գործ է դրել Դումայի գրութիւնը ամրապնդելու համար»։ Գօլօվինի հրաժարականը, «Рѣчь»-ի կարծիքով, նոր, չը նախատեսված բարդութիւններ կարող է առաջ բերել։

«Русь» լրագրի ասելով, Գօլօվինը մնում է, իսկ հեռանում է միայն նախագահի օգնականներից մէկը, որին փոխարինելու համար առաջ է քաշվում կադետների կողմից Տեսլենկօի թեկնածութիւնը։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԿԵԱՆՔԻՑ

(Նամակ Մօսկվայից, ապրիլի 27-ին)

XVI

«Ռուս ժողովրդի միութեան» կենտրօնական մարմինը վաղուց միջնորդում էր կառավարութեան առաջ, որ թոյլատրի իրան «միութեան» բաժանմունքների ներկայացուցիչների ընդհանուր ժողով գումարել։ Այդ ժողովը պէտք է կայանայ Ռուսաստանի սրտում,—Մօսկվայում։ Թոյլտուութիւնը ստացվեց, պետութեան բոլոր ծայրերից «միութեան» բոլոր ներկայացուցիչները եկան Մօսկվա և եբէկ, մարտի 26-ին, Մօսկվայի նշանաւոր փողոցներով մի [illegible]

Ցոյցը, ինչպէս նախագծել էին նրա ղեկավարները, պէտք է որ շատ հսկայական լիներ և մեծ հետաքրքրութիւն զարթեցնէր եթէ ոչ ամբողջ Ռուսաստանում, գոնէ մայրաքաղաքում։ Նրանք հաւատացած էին, որ ցոյցին առնուազը 100 հազար հոգի «իսկական ռուս մարդ» կը մասնակցէ. բայց նրանք չարաչար սխալվեցին. «իսկական ռուս մարդիկ» չէին երևում այդ օրը, նրանց հետքն անգամ չը կար։ Ցոյցին մասնակցում էր, ականատեսների հետ միասին, ընդամենը 5,000 հոգի։

Մօսկարխիստական շրջաններում շատ վազուց խօսում էին այն մասին, որ ցոյցը իր բոլոր կողմերով աչքի պիտի ընկնի և ունենայ իր արժանի տեղը, անշուշտ, իր համակրողների շրջանում։ Սակայն ի ցաւ նրանց, պէտք է ասել, որ Գրինգմուտի, Պուրիշկեվիչի, Կրուշևանի և ընկերութեան վաղուցվայ այդ ցնորքը չիրականացաւ, բէաղ դոյն չը ստացաւ։ Բիւրօկրատական մեռած բէժիմի, հին կարգերի և աւանդական սովորութիւնների այդ ջերմագին պաշտպանները, նրանց հաւատարիմ սպասաւորները կատարեալ հիասթափվեցին։ Նրանց զարմանքը խիստ մեծ էր, երբ ցոյցը, իրանց սպասածին հակառակ, չը կարողացաւ ռուս հասարակութեան այնպիսի մի մեծ բաղմութիւն գրաւել, որպիսին սպասում էին նրանք։ Ո՞վ եղել է այդ ցոյցին, ով ուշադրութեամբ հետևել է նրա ամբողջ ընթացքին, այդպիսին անշուշտ այն եզրակացութեան եկած կը լինի, որ երբեկվայ ցոյցը շատ աննշան և անհետաքրքիր էր, որ նա շատ քիչ բանով աչքի ընկաւ մնայն։

Այժմ մի բան այն մասին, թէ ցոյցը ինչպէս, որտեղից սկսվեց և ինչով վերջացաւ։

Առաւօտեան ուղիղ ժամը 10-ին ցուցարարների ամբողջ կազմը դուրս եկաւ հոգևոր իշխանութեան թեմական տնից, որ գտնվում է Լիխով պերէուլկում, և Պետրովկա փողոցով դիմից դէպի պատմական «Кремль»-ը։ Ամենից առաջ, որպէս արարողապետ, գնում էր յայտնի պ. Տօրոպով, որ ձեռքին ոսկեայ գաւազան էր կրում։ Այդ այն Տօրոպովն է, որի ասն գարպան գնակից անչայտ չարագործը սպանեց Իոլլոսին։ Նա «ռուս ժողովրդի միութեան» բաժանմունքներից մէկի նախագահն է։ Նրա ետևից գնում էր ոչ պակաս յայտնի՝ իշխ. Ա. Դ. Շչերբատով, որ Մարթաս Առուհատածնի պատկերն էր առնում։ Այս վերջինիս հետևում էին զրոշակիրները ու խաչվառակիրները, որոնց շուրջը գտնվում էին յայտնի «союзникъ»-ները, յանձին Գրինգմուտի։

Երբ հասան «Кремль»-ը, խաչվառակիրները Ուսպենսկի եկեղեցու մօտ կանգ առան, իսկ իրանց հետ ունեցած սրբի պատկերը ներս տարան եկեղեցին, որ օրհնեն։ «Кремль»-ում մերթոպոլիտ Վլադիմիրը հանդիսաւոր պատարագ մատոյց, որին ներկայ էին բարձրատիճան շատ հոգևորականներ։ Պատարագից անմիջապէս յետոյ, ամբողջ պրոցեսիան իր ամբողջ կազմով, Սպասկի դարպասների միջով անցնելով մտաւ Կարմիր հրապարակը, որտեղ Մինինի և Պօժարսկու արձանի առաջ եղիցես երգեցին «Вѣчная память»-ը, որից յետոյ, շարունակելով ճանապարհը, ուղղվեցին դէպի Իվերսկի յայտնի մատուռը, որ գտնվում է Վասկրեսենսկի հրապարակում, քաղաքային վարչութեան շինութեան մօտ։ Այդտեղ մաղթանք կատարվեց, իսկ քիչ ժամանակից յետոյ գեներալ-նահանգապետ պ. Դերբէնտն իր սվիտայով դուրս եկաւ ասն պատշգամբը։ «Ռուս ժողովրդի միութեան» պարապլուխները վճռել էին Թագաւոր Կայսրին ուղարկելիք հեռագիրը այստեղ յանձնել գեն.-նահանգապետին, որ վերջինս [illegible] Այդ [illegible] էլ ցուցարարներից երկու հոգի,—Գրինգմուտ և իշ. Շչերբատով, համաձայն իրանց խնդրի, ընդունվեցին գեներ.-նահանգապետից, որին և յանձնեցին հեռագիրը «Իսկական ռուս մարդկանց» խիստ ոգևորեց և ուրախութիւն պատճառեց գեներալ-նահանգապետի պատշգամբից արտասանած «Ուրա Թագաւոր Կայսրի առողջութեան համար» խօսքերը, որ պատասխան էր ամբոխի անվերջ աղաղակներին։ Ամբոխը գեներ.-նահանգապետի խօսքերին միահամուռ կերպով պատասխանեց «ուրա»-ներով։

Ցոյցի ամբողջ ժամանակ, պէտք է նկատել, որ երգվում էին «Տէր, պահեա զԿայսր» և զանազան կրօնական երգեր, որոնք իրանց անկանոնութեամբ, անշնորհքութեամբ մարդու աչք էին ծակում։

Գեներալ-նահանգապետի անից ամբոխը նոյն Տվերսկայա փողոցով ուղղվեց դէպի Սարասանի վանքը և ապա Սարասանոյ զբօսավայրով դէպի հոգևոր իշխանութեան թեմական տունը, Լիխով պերէուլօկը։

Բոլոր դրօշակների և խաչվառների թիւը մօտ 200-ի էր հասնում, որոնցից իւրաքանչիւրը տանում էր 3—10 հոգի։ Ամբոխի մէջ աչքի էին ընկնում սև-հարիւրեակային «յայտնի հերոսներ»։ Իլիօդոր աբեղան, Կրուշևան, Պուրիշկեվիչ, Դուբրովին և «ռուս ժողովրդի միութեան» յայտնի լիդերները։

Առհասարակ նկատելի էր այն, որ ցոյցին մասնակցող ինտելիգենտ մարդկանց թիւը այնքան քիչ էր, որ մտերի վրա կարելի է հաշուել։ Ամբոխի մեծ մասը հասարակ, տգէտ և անգիտակից մասից էր բաղկացած։ Նրանք միայն կոյր գործիք էին Գրինգմուտի և նրա ընկերների ձեռքին։ Պէտք է տեսնել, թէ ինչպէս այդ թշուառները գլուխները ցած ձգած, մեռելի պէս անշարժ, սուտ ու փուտ, առանց ծլպտուն հանելու կատարում էին իրանց ղեկավարների հրամանները, դրօշակներն ու խաչվառները ինչպէս համբերութեամբ տանում էին։ Դա, ի հարկէ, ցաւալի և խղճալի է, բայց ինչ արած որ իրողութիւն է, այն էլ գան իրողութիւն...

«Ռուս ժողովրդի միութեան» բաժանմունքների ներկայացուցիչների ընդհանուր ժողովը կամ, այսպէս ասած, համագումարը, կուսեցաւ մի շարք նիստեր, ուր կը քննվեն մի շարք հրատապ խնդիրներ և հարցեր, որ յուզում և փոթորկում է ժամանակից ռուս հասարակական կեանքը։

Կասկած չը կայ և խօսք չէ կարող լինել այն մասին, որ նրանց նիստերի մէջ ամենագլխաւոր տեղը Պետական Դումայի արձակման խնդիրն է լինելու, որի համար նրան գործ են դնելու և՛ ջանք, և՛ խանդ, և՛ ոյժ, և՛ միջոցներ և ամեն ինչ, սակայն բոլորն էլ ապարդիւն...

Ռակու-Զօն

ՏԱՇԵՂՆԵՐ

V

Քանդած օճախ

Մօսկվայի համալսարանի նախկին պրոֆեսօր, համբաւաւոր Ալ. Իվ. Զուպրօվի գեղեցիկ յօդուածը «Վիճակագրութիւնը և մնունդ մատակարարելու գործը» (Статистика и продовольственное дѣло, «Москов. еженедѣль.» № 6, եր. 11—19), միայն խոր տխրութիւն է ընդունակ յարուցել մեր առանց այն էլ անհալից օրերը, նորից յիշեցնելով թէ քանի քանի միլիօն կորսված մարդկային կեանքեր, որքան անծայր դժբաղդութիւններ էին «հին կարգերը»—ancien regime-Ռուսաստանի համար...

Մեր ծերունի գիտնականը Գուրկո-Լիդվալեան «զորձը» ընդհանրացնում է, նայելով նրա արմատին և կրկին հրատարում հասարակութեան լուրջ ուշադրութիւնը այն մեծ չարիքի վրա, որի անունն է приказный строй, միահեծան կառավարութիւն, ով որ էլ կանգնած լինի նրա ղեկի գլուխը՝ լիբը և լիկի բիւրօկրաներից մէկը, սիրահար սիրունիկ կանանց և կատարելագործված անհոտ կլոռետների à la Lidvale, թէ օրինաւոր և անշանսէր մէկը... Բանը գործ տանելու ձևի մէջ է, անկախ անձնաւորութիւններից։ Եւ սովալներին օգնելու գործի օրինակի վրա մեզ գիտնականը պարզ, անխոցելի փաստերով, հակիրճ և համոզեցուցիչ անգամ համբակներիս համար, բացատրում է, որ տիրող կարգերի շնորհիւ սովի տանջանքները ամրոքելու խնդրում, ինչպէս և այլ ժողովրդական գործերում, մենք միշտ հանդիպում ենք Ցուսիմայի և Մուկդենի և երբէք Տօկիօյի շէմքին, որքան էլ արբեցած, արբեցրած և անարդարացուցած խուժանը—ցնցոտիներում լինի նա, թէ ոսկեզարդ համազգեստում,—չը գոռայ à Tokio, à Tokio...։

Շատ շէն օճախներ է քանդել «հին կարգերը և այս դժբաղդ օրերին, երբ բաղում միլիոնաւոր գիւղացիութիւնը հաց է մուրում թէ մեղանում և թէ ամբողջ աշխարհում (...) ակամայից յիշվում է ռուս տեղական ինքնավարութիւն—զեմստվոյի գլուխ գործոցը, որի անունն է զեմստվոյական վիճակագրութիւն (земская статистика)։ Երբ և իցէ Պետական Դումայի ամբիոնից—թէ նրան, Դումային, միայն ապրել է վիճակված,—մենք կը լսենք այդ վիճակագրութեան վարպետ և բաղամատաղ աշխատաւոր, այժմ պատգամաւոր, Փ. Ա. Շչերբինայի բերանից և այն հսկայ ժողովրդաչէն գործը, որ կատարել են վիճակագրութեան անձնուէր և տաղանդաւոր մշակները, բանալով անգամ նոր հորիզոններ և գիտութեան համար, և այն անլուր, տնաքանդ հալածանքները, որ XIX դարավերջին խսպառ գրեթէ սպանեցին նրան։ Բաւական է յիշել այն բարձր գովասանքը, որին արժանացաւ այդ գործը լուրջ և չոգևորվող մեծ գիտնականի՝ Կարլ-Մարքսի կողմից—նրա ռուս բարեկամները և յարգողները միշտ ուղարկում էին նրան վիճակագրական հատորները և նա մեծ ուշադրութեամբ նրանց ուսումնասիրում էր։ Մարքսը բաւականին լաւ գիտէր ռուսերէն։

Անհրաժեշտութիւնը ի հարկէ ստիպեց զեմստվոյին, որ նա դիմի վիճակագրութեան, առանց որի իսօք չէ կարող լինել խելացի գործունէութեան։ Եւ ազատամտ հին զեմստվոյի պլօլոժենիով (1 յունվարի 1864 թ.) դեկավարվող ինքնավարութիւնը դրսից հրաւիրեց կարող մշակների առաջ տանել այդ գործը։ Այդ մշակները նոյնպէս չը կաշկանդված բիւրօկրատական կապանքներով և ժանդարմական հսկողութիւնով, մէկ-երկու տասնեակ տարիներ կատարեցին մի վիթխարի և գիտական բոլոր պահանջներին գոհացնող աշխատութիւն, առաջ քաշեցին այնպիսի անուններ, որ այժմս յայտնի են քիչ շատ լուսաւորված մարդկանց։ բաւական է յիշել Վ. Ի. Օրլովի, Ի. Ա. Վերների, Ն. Ն. Բոմանովի, Ն. Փ. Անննենկու, Վ. Ի. Պոկրովսկու, Փ. Ա. Շչերբինայի, Ա. Վ. Պեչերնօվի, Ա. Ա. Բուսօվի, Ս. Մ. Բլեկլովի, Վ. Ն. Գրիգորիևի, Ս. Ա. Խարիզոմենովի, Գ. Գ. Զեբվինսկու, պրոֆ. Ն. Ա. Կարլուկովի և շատ շատերի հանրածանօթ անունները և նրանց՝ և ընկեր և հեղինակաւոր դեկավարողներս տու պրոֆ. Ալ. Իվ. Զուպրօվի անունը...

Եւ երբ մեծ ժողովրդական տգէտի օրերին (1891—92 թեկանի սարսափելի սովի ժամանակ) հարկաւորվեց լուրջ և մեծածաւալ, թէ հասարակական, թէ պետական օգնութիւն, զեմստվոյական վիճակագրութիւնը, հինված հիմնական և ընթացիկ վիճակագրական տեղեկութիւնների վրա, ճշգրտէն որոշեց ժողովրդական կարիքների չափը. շատ դէպքերում բիւրօկրատական վիճեց նրա որոշածը և միայն իրականութիւնը հաստատեց արդար կողմը՝ զեմստվոյի տեղեկութիւնները։

Ժողովրդական կեանքի ուսումնասիրութեան այդ անսպառ աղբիւրը մեծ ծառայութիւն է արել և բիւրօկրատական օրէնսդրութեան համար, նրա մեծ նշանակութիւնը առաւել ճանաչել են հոգևորդութեան և ֆինանսների մինիստրութիւնները։ Եւ երբ Ս. Ի. Վիտէին հարկադրվեց լուրջ, անխրթելի ուսումնասիրութիւն վերաբերել ժողովրդական կեանքի, նա դիմեց ոչ իր ճիւղաւորված դեպարտամենտների ոյժերին, այլ զեմստվոյական վիճակագրութեան մշակներին (տես երկհատոր «О вліяніи урожаевъ и хлѣбныхъ цѣнъ на нѣкоторыя стороны русскаго народнаго хозяйства» գիրքը)։

Ցեռ գնացի (բէակցիա) տարիները, առաւել «խաղաղարար» Կայսրի ամբողջ և յիշատակելի թագաւորութեան միջոցին, ստեղծեցին, ինչպէս յայտնի է, նոր զեմստվոյական պլօլոժենիէ (12 յունիսի 1890 թ.)։ մայլ մարդիկ կարծես ուզում էին արդարացնել փանտիկոս Կ. Կ. Լէօնտիեվի ասածը. «Ռուսաստանը փրկելու համար նրան պիտի սասցնել»... Սկսեցին և անխնայ քշել «վնասակար» վիճակագրութիւնը, հեռացնելով, աքսորելով նրա մշակներին։ Բիւրօկրատական յանձին նոյն Վիտէի յանդգնեց անգամ զեմվարել այդ գործին... վերջը բացարձակապէս յայտարարվեց ներքին գործերի մինիստրի կողմից «վնասակար»... Փակվեցին շատ նահանգներում վիճակագրական բիւրօներ... ձերբակալվեցին նրանց տպագրած հատորները...

Եւ այժմ, երբ հարկաւորվեց սովեալ ժողովրդի ազէտի չափը որոշել իրականին մօտ, գործի ղեկավար բիւրօկրատային մնում է «փալ բաց անել»...

(Կը շարունակվի)

ԿԱՆՈՆՆԵՐ ԶԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԴԱՍԵՐԻ ՈՒ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մօտ օրերս հաղորդել է ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին չափահասների համար այսուհետև հիմնվելիք դասերի ու դասընթացքների նոր հաստատված կանոնները։

1) Զափահասների համար դասեր և դասընթացքներ կարելի է հիմնել հանրակրթական կամ մասնագիտական առարկաներ և կամ թէ մէկը կամ միւսը միասին սովորեցնելու նպատակով։

2) Զափահասների համար դասեր և դասընթացքներ կարելի է հիմնել թէ գաղրոցներին կից և թէ նրանցից բոլորովին առանձին։

3) Այդպիսի դասեր ու դասընթացքներ կարելի է հիմնել թէ տղամարդկանց կամ կանանց սեռի համար առանձին առանձին և թէ երկուսի համար միասին—խառը։

4) Զափահասների դասերի ու դասընթացքների հիմնադիրներ կարող են լինել տեսչութիւնները, խորհուրդները, քաղաքային կամ գիւղական հասարակաց. հաստատութիւնները, մասնաւոր ընկերութիւններ և մասնաւոր անձինք։

5) Դասաւանդվող առարկաների ծրագրի տեսակէտից չափահասների համար բացվող դասերն ու դասընթացքները համապատասխանում են կամ տարրական միջանակ գրոցներին, կամ իրական-ներին, կամ 1872 թ.ի կանոնադրութեամբ հիմնված քաղաքային-ներին, կամ արդիւնաբերական գաղրոցներին, նոյնպէս և կարող են հիմնվել առանձին մշակված ծրագրով օրէնսդրքի 3715-րդ յօդուածի հիման վրա (XI-րդ հատոր, մասն առաջին, 1893 թ.ի հրատարակութիւն) մասնաւոր գաղրոցների կանոնադրութեան համաձայն։

6) Զափահասների համար դասեր և դասընթացքներ քանալ թոյլատրում են 5-րդ կէսի մէջ յիշված գաղրոցների ծրագրով ուսումնարանական շրջանների հոգաբարձուները՝ մասնաւոր գաղրոցների կանոնադրութեան համաձայն։

7) Զափահասների համար հիմնվող դասերն ու դասընթացքները ենթարկվում են ուսումնարանական խորհուրդների, ինսպեկտորների, ժողովրդական գաղրոցների դիրեկտորների և ուսումնարանական շրջանների հոգաբարձուների իրաւասութեան ու հսկողութեան։

8) Զափահասների դասերում և դասընթացքներում դասաւանդելու համար հիմնադիրները կամ վարիչները ընդունում են այնպիսի մարդկանց, որոնք համապատասխան կրթական [illegible]

նում։ Եւ նա, զգալով որ իր օրերը համրված են արդէն, մէկ օր իր մօտ է հրաւիրում ամենամերձաւոր պալատականներին ու նրանց ասում.

—Այ պարոններ. ես արդէն մեռնելու վրա եմ և մի քանի օր է միայն մնում ինձ ապրելու, սակայն ես չեմ կամենում ինձ հետ գերեզման տանել իմ վիշտը, որը իմ հիւանդութեան հէնց պատճառը եղաւ։

Ես չեմ կամենում և դէպի իմ հանդուցեալ մայրը վատ զգացմունքով գերեզման մտնել ու ցանկանում եմ ինձ համար պարզած լինել մի հարց, որ ամիսներից ի վեր ահա կրծում է իմ սիրտը։ Ասացէք ինձ ճիշտը, այլևս մի վախենաք ինձնից. իմ մի ոտքը արդէն գերեզմանումն է և ցանկանում եմ, որ գէթ մէկ անգամ դուք ինձ ճշմարտութիւնը խօսած լինէք։ Ասէք, մի՞թէ ձեր աչքերը տեսան այն շալը, որ «Նօվրուզ Բայրամին» ծերունի դարվիշը ինձ նուէր բերեց... Առանց քաշվելու յայտարարում եմ ձեզ, որ իմ աչքերը այն շալը չ։ տեսան, բայց և այնպէս ես չեմ ուզում հաւատալ, թէ ես ապօրինի զաւակ եմ եղել...

Պալատականները իրարու երես են նայում և սրտապնդված մահամերձ թագաւորի անկոծ խոստովանութիւնից, մէկը միւսի ետեւից սկսում են խոստովանել, թէ իրանք էլ ոչ մի շալ չեն տեսել, որ խօնչայի մէջ ոչինչ չէ եղել, բայց և այնպէս ամաչել են մի բան ասելու, վախենալով թէ կարող են ապօրինի զաւակ լինելու մէջ կասկածվել։

—Հիմա հասկացաք, թէ ով էր Դարվիշը,—ասաց ծերունի մեր խօսակիցը, իր պատմութիւնը վերջացնելով.—ըմբռնեցիք, թէ ինչ ձևով էր այդ անիծված դարվիշը յիմարացրել տարիների ընթացքում մեզ։ Դեռ էլի փառք տանք Աստծուն, որ այսօր հայ ժողովուրդն էլ է սկսել Շահի ու պալատականների նման հասկանալ ամեն բան։ Թէ որ սատիճան արագութեամբ է սթափվում մեր ժողովուրդը Դարվիշի մխիթիկացիայից, դրան ամենալաւ ապացոյց կարող է լինել հէնց մեր այսօրվան խօսակցութիւնը. չէ՞ որ աւելի առաջ ոչ դուք այս խօսակցութիւնները կանէիք և ոչ էլ ես իմ մոռացած Դարվիշի պատմութիւնը կը յիշէի։ Դէհ, բաւական է, ինձ սպասում են, ասաց նա և, շտապով հրաժեշտ տալով բոլորիս, հեռացաւ։

Մենք բոլորս էլ ծիծաղեցինք ծերունու սըրամիտ պատմութեան և հաճեմատութեան վրա ու քիչ յետոյ նոյնպէս ցրվեցինք։

Ա.-Ադամ

Թաղաղարար» Կայսրի ամբողջ և յիշատակելի թագաւորութեան միջոցին, ստեղծեցին, ինչպէս յայտնի է, նոր զեմստվոյական պլօլոժենիէ (12 յունիսի 1890 թ.)։ մայլ մարդիկ կարծես ուզում էին արդարացնել փանտիկոս Կ. Կ. Լէօնտիեվի ասածը. «Ռուսաստանը փրկելու համար նրան պիտի սասցնել»... Սկսեցին և անխնայ քշել «վնասակար» վիճակագրութիւնը, հեռացնելով, աքսորելով նրա մշակներին։ Բիւրօկրատական յանձին նոյն Վիտէի յանդգնեց անգամ զեմվարել այդ գործին... վերջը բացարձակապէս յայտարարվեց ներքին գործերի մինիստրի կողմից «վնասակար»... Փակվեցին շատ նահանգներում վիճակագրական բիւրօներ... ձերբակալվեցին նրանց տպագրած հատորները...

Եւ այժմ, երբ հարկաւորվեց սովեալ ժողովրդի ազէտի չափը որոշել իրականին մօտ, գործի ղեկավար բիւրօկրատային մնում է «փալ բաց անել»...

(Կը շարունակվի)

ԿԱՆՈՆՆԵՐ ԶԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԴԱՍԵՐԻ ՈՒ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մօտ օրերս հաղորդել է ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին չափահասների համար այսուհետև հիմնվելիք դասերի ու դասընթացքների նոր հաստատված կանոնները։

1) Զափահասների համար դասեր և դասընթացքներ կարելի է հիմնել հանրակրթական կամ մասնագիտական առարկաներ և կամ թէ մէկը կամ միւսը միասին սովորեցնելու նպատակով։

2) Զափահասների համար դասեր և դասընթացքներ կարելի է հիմնել թէ գաղրոցներին կից և թէ նրանցից բոլորովին առանձին։

3) Այդպիսի դասեր ու դասընթացքներ կարելի է հիմնել թէ տղամարդկանց կամ կանանց սեռի համար առանձին առանձին և թէ երկուսի համար միասին—խառը։

4) Զափահասների դասերի ու դասընթացքների հիմնադիրներ կարող են լինել տեսչութիւնները, խորհուրդները, քաղաքային կամ գիւղական հասարակաց. հաստատութիւնները, մասնաւոր ընկերութիւններ և մասնաւոր անձինք։

5) Դասաւանդվող առարկաների ծրագրի տեսակէտից չափահասների համար բացվող դասերն ու դասընթացքները համապատասխանում են կամ տարրական միջանակ գրոցներին, կամ իրական-ներին, կամ 1872 թ.ի կանոնադրութեամբ հիմնված քաղաքային-ներին, կամ արդիւնաբերական գաղրոցներին, նոյնպէս և կարող են հիմնվել առանձին մշակված ծրագրով օրէնսդրքի 3715-րդ յօդուածի հիման վրա (XI-րդ հատոր, մասն առաջին, 1893 թ.ի հրատարակութիւն) մասնաւոր գաղրոցների կանոնադրութեան համաձայն։

6) Զափահասների համար դասեր և դասընթացքներ քանալ թոյլատրում են 5-րդ կէսի մէջ յիշված գաղրոցների ծրագրով ուսումնարանական շրջանների հոգաբարձուները՝ մասնաւոր գաղրոցների կանոնադրութեան համաձայն։

7) Զափահասների համար հիմնվող դասերն ու դասընթացքները ենթարկվում են ուսումնարանական խորհուրդների, ինսպեկտորների, ժողովրդական գաղրոցների դիրեկտորների և ուսումնարանական շրջանների հոգաբարձուների իրաւասութեան ու հսկողութեան։

8) Զափահասների դասերում և դասընթացքներում դասաւանդելու համար հիմնադիրները կամ վարիչները ընդունում են այնպիսի մարդկանց, որոնք համապատասխան կրթական

ցենդ ունեն, և այն էլ նախապէս համաձայնութիւն ստանալով պատշաճաւոր ուսումնարանական վարչութիւնից։

9) Զարմանաների դասերի և դասընթացքների կառավարչի կամ կարգադրիչի և ուսուցչի կողմից տրվում է վիայական դասընթացքը աւարտելու մասին։ Այդ վիայականը ոչ մի արտօնութիւն չէ տալիս։

(«Բ. Բ.»)

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ՐԻՒԲՔՉԵԱՆԻ ՆԵԳԱՏԻՒՆԵՐԸ

Շատերին յայտնի է հռչակաւոր Անի քաղաքի լուսանկար ստէօրօսկոպները, որ մեզանում տարածված է բաւական չափով։ Առաջին մարդը մեզանում, որ մտածեց Անիի աւերակներն ու տեսարանները ոչ միայն լուսանկարել, այլ և ռելիէֆ դիտելու համար ստէօրօսկոպի յարմարեցնել,—Յ. Ռիւբքչեանն էր, որի գործը ցարդ ևս, համեմատութեամբ նմանների, հիացմունք է պատճառում։

1877—78 թուականներին, ռուս տաճկական պատերազմի օրերում, մինչ ամեն տեղ անապահովութիւն էր տիրում, Ռիւբքչեանը լուսանկարչական ապարատը ձեռքին պտտում էր Անիի աւերակների մէջ և լուսանկարում հայրենի հնութիւնների մնացորդները։ Եւ, ինչպէս ասացինք, դա առաջին փորձն էր։ Առաջին անգամն էր, որ այդ հնութիւնները դարերի ընթացքում մաշվելուց, թափթփվելուց յետոյ լուսանկարվում էին հեռաբքքը-վողների, գուցէ և բանասէրների համար։ Եւ դա մեզանից երեսուն տարի առաջ էր... Այդ օրվանից այս կողմը շատ փոփոխութիւններ են կրել Անիի աւերակները. շատ վանքեր ու շինութիւններ փոփոխել են աւելի կամ պակաս չափով իրանց նախկին պատկերը։ Այս հանգամանքի առաջ Յ. Ռիւբքչեանի լուսանկարները հանդիսանում են իբրև մի տեսակ հնութիւն, կամ յաջնայն դէպս մի գնահատելի բան, որ վերանորոգել չէ կարելի։

Դժբաղդաբար Յ. Ռիւբքչեանը շատ մեռաւ և նրա գործերը մնային անմշակ՝ նրա հարսի, տիկին Թ. Ռիւբքչեանի մօտ։ Այդ գործերի քանակը բաւական մեծ թիւ է կազմում։ Տիկին Ռիւբքչեանը երկար պահելուց յետոյ Ռիւբքչեանի բոլոր լուսանկարների նեգատիւները, այժմ ստիպված է ծախել։ Ցանկալի է, որ Ռիւբքչեանի գործերը, իբրև մի տեսակ հնութիւն, ծախվելու դէպքում որևէ մի հասատութեան կամ գիտակ, նրանց արժէքը իմացող անձի ձեռքն անցնեն, որով որոշ չափով պահպանած կը լինեն իրանց նշանակութիւնը։ Բոլոր նեգատիւները մնացել են վերին ատիճանի մաքուր, անաղարտ և ամբողջական դրութեան մէջ, առանձին արկղիկներում յարմարեցրած։ Թէ նեգատիւների ինչ լինելու և թէ պայմանների մասին բանակցելու համար գնում եմ այստեղ նրանց չափը և տիրոջ հասցէն։

Անիի ստէօրօսկոպային նեգատիւներ 212 հատ, մեծութիւնը՝ 20×12½։

Այլ վանքերի ու տեսարանների նեգատիւներ՝ 1) մեծ 30 հատ, մեծութիւնը 30½×25⅓, 2) միջակ 34 հատ, մեծութիւնը 23×18¾, 3) փոքր 165 հատ, մեծութիւնը 18×15½։

Դիմել՝ Երևան պ. Պողոս Պողոսեանին, յանձնելու տիկին Ռիւբքչեանին։

Յ. Թաղէոսեան

Երևան

ՈՒՂԻՂ Է ԱՐԴԵՕՔ

II

Հայ գիւղացու նահապետական-բուտինական ձևի տնտեսութեան հետ սերտ կերպով կապված լինելու և նրանից բաժանվելու տրամադրութիւն չարտայայտելու պատճառները շատ են. բայց դրանցից մէկը և գլխաւորագոյնը նրա՝ գիւղացու համար (ինչպէս և ընդհանրապէս հայկական անցեալ կեանքում) դէպի իր անձից դուրս, այլ կողմերից գալիք վերջնական օգնութիւնն ունեցած յոյսն է և դիւրահաւանութիւնը դէպի հրաշալի «տեսիլքներ», ապագայ երջանկութեան մերձաւոր իրականացումը։ Ամեն մի անհատ, լինի նա գիւղացի թէ քաղաքացի, իր անտեսական-կենսական կարիքների աւելանալու համեմատ լարում է և իր մտաւոր ֆիզիքական ոյժը, կարիքները լրացնելու, հոգալու, նոր միջոցներ գտնելու համար։ Հայ գիւղացու օրէցօր աճող, բարդացող կարիքների հանդէպ հայ գիւղացիական տնտեսական կեանքում այդպիսի մի երևոյթ չենք նկատում։ Ծայրաչիգ հաւատը, յոյսն ու ծայրաչիգ լաւատեսութիւնը հայ գիւղացու համար ստեղծել են մի միտիքական անորոշ սպասողական դրութիւն և մեղրել նրա մէջ ամեն մի ինքնուրույն քայլ և ձգտում։

Այլ կերպ սպասելը սխալ կը լինէր։ Ո՞վ է եղել մինչև օրս հայ գիւղացու ձեռնարկութիւններին ուղղութիւն տուողը, ո՞վ է եղել նրա մտքի զեկավարը։ Սաղմոսը, ժամգիրքը և տիրացուն, իրանց այն «խրատներով»՝ թէ գիւղացին իր քրտնքի վաստակը վայելելու համար՝ հատիկը հողին պահ տալուց յետոյ, պէտք է խունկ ծխէ, մում վառէ, որ Աստուած մի առատ անձրև պարգևէ։ Իսկ զանգի ձայնը՝ կարելով գիւղացուն աշխատանքից, շարունակ հնչեցրել է այն «խրատը», թէ երաշտը, ժորեխը, բոյսերի և անասունների համաճարակ հիւանդութիւնները ատուածային ցասումն են և «նախախնամութեան կամքը», ներելնչել է այն «քարոզը», թէ քանի այստեղ գործում է Աստուծոյ կամքը, հիւանդ կենդանին առողջ նախերից զատելու—վերջինս վարակումից ազատելու նպատակով—ոչ միայն անօգուտ է, այլև դատապարտելի։ Այս բոլորը ի միասին հայ գիւղացու մէջ հաստատել են այն համոզմունքը, թէ իր անտեսական գործառնութիւնները համապատասխանում են և պիտէ համապատասխանեն տնտեսական այն մաշտաբին, որ «տացել է Ադամը» և թէ այդ մաշտաբից դուրս ուրիշը որոնելը կամ մտածելը ապարդիւն ջանք է։ Այստեղից ծնունդ է առնում հայ գիւղացու կասկածոտ և բացասական վերաբերմունքը դէպի տնտեսական որևէ նորութիւն—բարելաւութիւն, որ չէ մտած վերոյիշեալ մաշտաբի շրջանակի մէջ։ Եւ այս վերաբերմունքը տիրող ոյժ էր (մինչև վերջին ժամանակները օտարազգի հաբևաններից օրինակ վերցնելը) և կաշկանդել էր ու կաշկանդում է հայ գիւղացու ամեն մի քայլը։ Շնորհիւ այդ բացասական, կասկածոտ վերաբերմունքի հայ գիւղացին ամեն մի նոր-ամէնբև տնտեսութեան մէջ համարում է, մինչև նրա արդիւնքը իր ձեռքում տեսնելը, շեղումն նպատակից և կորստաբեր քայլ։ Միթէ ճշմարտութիւն չէ, որ մեր գաւառներում կան երեսաստրներ, որոնք ամեն ջանք գործ են դնում տնտեսական բարելաւութիւններ մացնելու, բայց նրանց ջանքերը ջախջախվում են, ընդհարվելով վերոյիշեալ բացասական երևոյթի հետ։ Այո, հայ գիւղացին իր անգրագիտութեան պատճառով գաղափար չունենալով տնտեսական լաւագոյն ձևերի մասին, չէ կարող համակրել այդ չը ճանաչած ձևը, և միշտ կրկնում է նրա նկատմամբ իր տատը. «փորձած թանը աւելի լաւ է, քան չը փորձած մածունը», կարծելով, որ չը փորձած մածունին դիմելը գնահատիչ անկման դուռ բաց կանի նրա համար։

Բացասական, կասկածոտ վերաբերմունքի վրա աւելանում է անվստահութիւն դէպի իր ձեռքի գործը, դէպի իր ոյժերը։

Եւ շնորհիւ այդպիսի անվստահութեան, հայ գիւղացու ոյժը չէ արտայայտվում լիուլի կերպով և մասնվում է անգործութեան—մասվան։ Որովհետև ուր տիրում է անվստահութիւն, այնտեղ չէ կարող ծնունդ առնել ձեռնարկութեան ոգին. իսկ սա ամեն մի ասպարէզում գործի աջողութեան առաջնակարգ պայմանն է։ Միթէ սխալ չի լինի թոյլ տալ որ վերոյիշեալ բացասական մի շարք երևոյթները շարունակեն ծանրանալ գիւղական մթնոլորտում և սպասել գիւղացու իրականացրութեան բարեփոխմանը, և միթէ այս դէպքում այդ երևոյթների տպաւորութիւնը չի արտայայտվի դեռ երկար ժամանակ գիւղացու տնտեսական կեանքում, նրա իրականացութեան յեղանջումից յետոյ էլ։ Միթէ երօք խօսքը, խրատն ու յորդորը անզօր և ապարդիւն կը լինեն այդ երևոյթները վերացնելու գործում. երևոյթներ, որոնք թանձրացել են նման «խօսքի-խրատի» և զանգի զօրանչիւնի ներգործութեամբ։

Դուք ապարդիւն ֆրազներ էք համարում «բարեմիտ խրատները», որովհետև քառասուն տարվայ փորձը այդ է ցոյց տուել։ Բայց ինչ բանի էք ակնարկում զուք դրանով։ Միթէ մեզանում ազգան հին ժամանակներից արդէն գոյութիւն ունի գիւղացիական-գիւղատնտեսական գրականութիւն! Բայց ո՞ւրտեղ է այդ գրականութիւնը։ Գուցէ դուք ի նկատի ունէք «Մշակը». բայց միթէ «Մշակի» բաց-սիրտ ուղղութիւնն է եղել գիւղատնտեսական գիտելիքներ հաղորդելը և վերջապէս մինչև օրս որքան աջող պայմանների մէջ է եղել «Մշակը» տարածելու իր առաջնորդող խրատները հայ գիւղացու մէջ։ Ոչ, պարոններ, հայը անտեղեակ է մացել և անտեղեակ է լաւագոյն տնտեսութեան մասին։ Նա այժմ, քան երբ և իցէ, կարօտում է կենդանի օրինակների և կենդանի խօսքի, խորհուրդների, խրատների և ցուցումների իր տնտեսութեան մէջ բարելաւութիւններ մացնելու նկատմամբ։ Նա ընդունակ է թէև ոչ լիովին, գտնէ նկատելի չափով օգտվել այդ խրատներից։ Իսկ չօգտվելը դեռ ևս ապացոյց չէ օգտվելու անկարողութեան, «միջոց» չունենալու ինչպէս տնտեսական, այնպէս և կրթական ասպարէզում։ Մեր շատ գիւղերը կարող էին ուսումնարան ունենալ, եթէ չը լինէին պատմական անտարբերութիւնը դէպի ուսումը գիւղացու կողմից և կրթական գործում իրան տնօրէն յայտարարող հոգևորականութեան գործակալների անգործութիւնը։

Մենք սկզբից շեշտեցինք, որ գիւղացու տնտեսութիւնը արտատպէս կը բարեփոխվի նրա ազատագրութիւնից—հողի տէր և ազատ քաղաքացի դառնալուց յետոյ,—որ անհրաժեշտ է քարոզել գիւղացուն ձգտել այս ուղղութեամբ իր ոյժի ամբողջ թափով։ Սակայն աչքի առաջ պէտք է ունենալ, որ իրականացի հաստատումը և նրա պտուղների վայելումը յանկարծ չի լինի, ժամանակի գործ է դա, իսկ ժամանակը անցնում անդառնալի կերպով՝ հասցնելով տնտեսական քայքայումը իր գագաթնակէտին։ Միջոցների մասին հարկաւոր է տեղեկացնել գիւղացուն հէնց այժմեանից. ազատագրութեան կոչի հետ միաժամանակ խօսել նաև զուտ տնտեսավարական յեղափոխութեան քարոզը, մացնել գիւղացու մէջ գիտակցութիւն տնտեսական յեղափոխութեան անհրաժեշտութեան մասին։ Եւ քանի դրանիս է, քանի պատասում է կրթութիւնը, քանի անոյժ է գիւղական երիտասարդութիւնը, քանի չը կան ազատ կարդեր, գործը կը գնայ դանդաղ սկզբում. բայց ամեն մի կուլտուրական ձեռնարկութեան զարգացումը առաջ է գնացել նոյն փշոտ ճանապարհով։ Իրաւունքի կուլ քարոզը խօսելով, անտես չը պէտք է անել տնտեսավարական յեղափոխական կոչը. «Помирать собирайся, а рожь сѣй»!

Ա. Ինդճեան

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Ապրիլի 28-ին

Ձեմարանի ուսանող կոչվածները այն տեղը հասցրին իրանց աւարքը, որ մի Զ. դասարանցի մարշ (գրաղ) բռնելով իր նման մի քանի «խելօքների» հետ, ինչպէս պատժում են, մէկ ուրբաթ գարեջրի վրա, վանքի բաղանիսից, կիսալողացած, ապրիլ ամսին, բանուկ ճանապարհով, վանքի հիւրանոցի առաջով, բոլորովին մերկ, ձեռքերը մէջքին դարսած գնում է լճի ափը երեք անգամ շրջելու (մօտ 1 վերստ). տեսնելով զբօսնող կանանց և մարդկանց, զգալով խղճի խայթ, իրան գցում է լիճը և լողանում, մինչ շորերը հագնում են։

Ամսիս 27-ին Գ. լարանցիք, թւով 14 հոգի, «վերջնական քննութիւն տալով» աւարտման վկայական ստանալու նպատակով, Բաքոսի ազդեցութեան տակ, դափ ու զուռնան առաջները գցած, հարայ-հրոցով, տաշի տալով, պար գալով, վանքի բակովը անցնում են, անպատուելով վարդապետներից մէկին իր արդար նկատողութեան համար, գնում ճեմարան։ Այդտեղից արշաւում են գիւղի փողոցները, մեծ հրապարակում, հասարակութեան առաջ, զուռնաչու նուագած «օրթաճալան» կենտաւրի-պպղուկի էին պարում։

Այդպէս թափօր հացրին մինչև լճի ափը և ապա նոյն ճանապարհով, նոյն հանդիսով վերադարձան դէպի ճեմարան շարունակելու կիսատ մնացածը։

Հանդիսատես արհեստաւոր ու կառապան դասակարգը մինչև անգամ իր զայրոյթը յայտնեց։ Ուսանողների ծնողներից մէկը, որ վաղարշապատցի էր, չը կարողանալով տանել իր որդու «խոհեմ» արարքները և համագիւղացիների նկատողութիւնները, մօտեցաւ խմբին իր որդուն հանելու այդ շրջանից, և թէ՛ մեզ զինեցաթախ բռունցքներ վազելէր, բայց շնորհիւ իր որդու ազատվեց։

Այժմս հարց է, արդեօք այդ ապազգայ հայ ազգի «յոյսերը», տարածվելով ազգի մէջ, մեր մասում սերունդին այդ պաշարով պէտք է կրթեն, թէ՞ այլ պաշարով։ Խելքը հասակում, կամ դիպլոմում չէ, պարոններ, այլ գլխումն է,—ասում է ժողովրդական առածը։

Պետրոս Աղազադեանց

ԴԱՌՆՈՒԹԵԱՆ ԲԱԺԱԿԸ

Դաշքուրուն, ապրիլի 21-ին

Աւազակները օրից օր շատանում, պատուհաս են դառնում առանց այն էլ թշուառութեան վերջին ծայրը հասած ազքատացած գիւղացու գլխին։ Մերթ այստեղ, մերթ այնտեղ կրակվում են դէզեր, անտառներ, գաւարգվում են դուքաններ, գոմեր։ Կառավարութիւնը աչքի արանքով է նայում այս հանգամանքների վրա։ Ժողովրդին կեղեքում են ու հարստահարում, և ոչ ոք չէ կայ այդ մասին մտածող։ Բաւական չէ, որ Դաշնակցութեան զինուորները մաղ մասին չեն խփում ժողովրդին օգնելու, շրջում են գիւղից-գիւղ, թալան ու կողոպուտ անում ու վշտացնում են առանց այդ էլ վշտոտ, մաշված և սովատանջ, ցաւտ ու եարալու ժողովրդին։ Ահա դրանցից մէկը, որ կատարվեց իմ աչքի առաջ։ Անցեալ օրը երեք հոգի (ռաճկատանցի) դաշնակցական զինուորներ եկան մեր գիւղը. տեսայ, որ նրանք քունել էին երկու մարդու ու մատղէրի սարատիով փողեր էին պահանջում. խեղճ մարդիկը խոնարհվում էին մինչև նրանց ոտները և աղերսում էին ազատ բաց թողնել։ Բայց նրանք քարացած խղճով անկարելի-անկարելի ասելով աշխատում էին նրանց զրպանները փողերը հանել. ես հասայ իմ ընկերների հետ և ազատեցի։ Մի ուրիշը ևս, Խաչատուր Մահտեսի-Գոլոխանեան ասում է, որ իրան ենթարկել են տուգանքի և պահանջում են ըսպէսալես, որովհետև ժամանակ չունենն սպասելու։ Պարզ է որ Բագու էին գնալու, ճանապարհածախք չունէին։ Որքան ես ծանօթ եմ պ. Գոլոխանեանցին ու նրա անցեալին, պէտք է ասել որ, նա մի յարգելի անձն է մեր գիւղացիների համար։ Նա իր մի քանի ընկերների հետ միասին հիմնել է հայոց դրպրոցը, հրաւիրել է ուսուցիչներ. դարձեալ նոյն մարդու շնորհիւն էր, որ մենք ունեցանք պատանի միդասեան դպրոց, ուր այժմ մօտ երեք հարիւր մանուկներ են կրթվում...

Դարձեալ նրա շնորհիւն էր, որ մի ժամանակ գողութիւնը, կողոպուտը, հրդեհները կանգ առան, աւազակները ասամիներն էին կրնացունում նրա վրա։

Խեղճ, չարաչար երկրագործ, սոսկ քեզ համար, փոքանք պատուհաս քեզ համար, վաշխառուներ, աւազակներ քեզ համար։ Դու անքուն, անմեղգիտ, չարատանջ աշխատիր, թող ուտեն, հագնվեն օտարները, իսկ քո քաղցած ու մերկ ընտանիքը թող թափառէ գնէ դուռ, ոմ է քեզ ճանաչողը, ոմ է ձայնդ լսողը. գուցէ մի օր Աստուած...

Յոյսերս մնայ Պետական Դումայ։

Հարիմ-բէկ Ենգոյեան

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Ապրիլի 29-ին

«Փայլակը» իր № 11-ում տարադաբար շանթում է Յ. Աթաբէկեանցին այն պատճառով, որ նա Պետերբուրգում մասնաւոր խօսակցութեան ժամանակ Դաշնակցութեան մասին անհպատ կարծիք է յայտնել, անուանելով նրան «դաշնակների, աւազակների և ժողովրդին տարեցնող կազմակերպութիւն»։

Այդ խռովարար թերթի խանգիկիչ խմբագիրները, տուած «զգալագի» համաձայն, այդ ջուր պղտորող յօդուածը հասցրին Կարս հէնց այն ժամանակ, երբ Աթաբէկեանցը նոյնպէս մտնելու էր Կարս։ Երևի առանձին հրանդ էլ բարձրագոյն իշխանութիւնից կը լինէր ազգային գործիչների անունով։ Մի քանի ինքնակոչ պատգամաւորներ, վերևից դրված կարգադրութեան համաձայն, իսկոյն ներկայանում են Աթաբէկեանցին և բացատրութիւն պահանջում Դաշնակցութեան հասցէին վիրաւորական տեղեկութիւն տալու մասին։ Ես, որքան էլ հարց ու փորձ արի, չը կարողացայ ճիշտը իմանալ թէ Աթաբէկեանցը ինչ տեսակ բացատրութիւն է տուել, միայն այսքանը գիտեմ, որ բարկացած գնացողները, հակառակ մեր սպասածին, մեղմացած դուրս են եկել։ Բայց սրանով չը բաւականացան։ Հրաւիրում են Աթաբէկեանցին մի խանութ և տալիս են Պետերբուրգից Տէր-Աւետիքեանցի գրած նամակը կարդալու և բացատրութիւն տալու։ Դարձեալ չը կարողացայ իմանալ թէ ինչ գոհացուցիչ բացատրութիւն է տուել զրգռված պարոններին։

Միայն այսքանը գիտեմ, որ եթէ Աթաբէկեանցը և նրան շրջապատող լուրջ անձնաւորութիւնները խոհեմութեամբ չը վարվէին, չաշխատէին խոյս տալ անբաւականութիւնից առաջ բերող ազեղ հանգամանքներից, «Փայլակի» զեկավարները և Տէր-Աւետիքեանցը մասամբ հասած կը լինէին իրանց մուրալին և սարքած պլաններին։ Աթաբէկեանցը, նահանգապետ Թոլլուեթեամբ, մի համեստ ժողով ևս արեց մօտ 60 հոգուց բաղկացած և Դումայի գործունէութեան մասին գոհացուցիչ բացատրութիւններ տուեց հարցասէր ժողովականներին։

Արամ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Ապրիլի 29-ին

Մենք խոստացել էինք «Մշակի» ընթերցողներին տեղեկութիւն տալ Երևանի թեմական դպրոցի դրամական դրութեան մասին։ Մեր ձեռք բերած տեղեկութիւնները նոյնութեամբ հաղորդում ենք ընթերցող հասարակութեանը, թողնելով հոգաբարձութեանը տալ աւելի ճիշտ և մանրամասն հաշիւ։

Զը նայելով, որ նոր հոգաբարձութիւնը արդէն անցեալ օգոստոս ամսից մտել է իր պաշտօնի մէջ, բայց և այնպէս մինչև այժմ չէ աջողվում նրան նախկին տարիների ապառիկները և պակաս ցոյց տուած գումարները ստանալ, որոնք հետեւեալներն են։

Վերջին երկու տարվայ ստացած թոշակներից պակաս է գրված մատեանում մօտաւորապէս վեց հարիւր ռուբլի։

Մի հաշիվ գանձապահ հոգաբարձու պ. Գէորգ Անտանեանցը փող է ստացել յիսուն ռուբլի՝ հայաստեղէնի գին երկու անգամ։

Կան շատ պակաս գումարներ նաև նուէրներից, որոնք դեռ ստացվում են և ինչպէս լսեցինք, 2000 ր. է հասնում։

Թոշակներից ապառիկներ են երեում 1000 ռուբլուց աւելի, որի ստանալու մասին ոչ մի տեղեկութիւն չը կայ։

Հնարաւորութիւն չը կայ ստուգելու հրատարակչական ընկերութեան կողմից դպրոցին նուիրած գրքերի հաշիւները, որոնց յանձնելու օրից մինչև նոր հոգաբարձութեան ստանալը միմիայն գրադարանի բանալին է անցել մի հոգաբարձուից մի ուրիշ։

Մոմավաճառութեան հաշուից անցեալ տարվայ մոմավաճառը պակաս է ցոյց տուել 800 ռ. աւելի գումար. թէև դրա դէմ այդ մոմավաճառից գրաւական է վերցրված, բայց և այնպէս ներկայ հոգաբարձութիւնը պահանջում է հին հոգաբարձութիւնից, ինչպէս և թոշակների պակասորդը պահանջում է նոյն հոգաբարձութիւնից, որմնցից շատ քիչ մասը ստացվում է, իսկ մնացածը վճռի մէջ է։ Մատեանները սարսափելի անկանոն են պահված եղել, այնպէս որ խոշոր գումարներ, օրինակ գանձարանից վերադարձված 80 հազար ռուբլու ռոճիկները և գումարները մատեաններում չեն յիշված, բաւականացել են միմիայն արձանագրութեան մէջ յիշատակել։ Ուսուցիչների մի ամսվայ ռոճիկ 1600 ր. չափ գումարը, որը վճարված է եղել 1905 թւի մարտ ամսին նոր հոգաբարձութիւնը հաշիւներ ներկայացնելուց յետոյ, յետ են պահանջել նոր հոգաբարձութիւնից մոռացած լինելու պատճառով։

Երկու տարի բանկերում կուտակված տոկոսները, մօտ 5000 ր. չափ, չեն ստացել, այնինչ փողի կարիք ունենալու պատճառով նոյն բանկերից տոկոսաբեր թղթերի գրաւականով տոկոսով փողեր են վերցրել։

Երբ կառավարութիւնը խլում է դպրոցի գումարները և տոկոսաբեր թղթերը, դրանց մասին ցուցակ չը կայ հոգաբարձութեան գրծերում, որի պատճառով այժմ գժուարութիւն է առաջանում ստուգելու՝ թէ կառավարութիւնը լրիւ է վերադարձրել թէ պակաս։

Կան պակաս գումարներ նաև հանգուցեալ բարերար Թայրիանցի կտակից—ինչպէս օրինակ, 30,000 ր. երեք մուրհակներ, որոնց մասին Թայրիանցը ինքը իր ձեռքով առանձին թղթի վրա գրած է եղել. իսկ նրա մահից յետոյ և մինչև այժմս էլ այդ մուրհակները չեն երևում։ Վերոյիշեալ մուրհակների մասին ներկայ հոգաբարձութիւնը ուղարկել էր Թիֆլիս այնտեղի բանկերում ստուգելու համար հոգաբարձուներ՝ պ. պ. Միրեկան Տէր-Մարտիրոսեանցին և Պողոս Կանդուրալեանին։

Ցանկալի էր, որ նրանք կամ հոգաբարձութիւնը նրանց եղբակցութեան մասին հասարակութեանը տեղեկութիւն տային։

Անհոգ են թողնված եղել և դպրոցական զանազան եկամուտները, որոնց վրա ներկայ հոգաբարձութիւնը խիստ ուշադրութիւն է դարձնում և այժմ իսկ նկատելի է դպրոցի արդիւնքի աւելանալը։ Ինչպէս լսում ենք, նոյնիսկ այս տարի առանց դեֆիցիտ է փակվելու դպրոցական ծախքի հաշիւը։

Մենք զարմանում ենք թէ մարդիկ, երբ ընդունակ չեն կամ պէտք է անհոգ վերաբերվեն դէպի հասարակական գործը, ինչո՞ւ են ընտրվում և յօնքը շինելու տեղ աչքն էլ հանում են։

Գալով ապագային, բացի դպրոցական մի հոյակապ շէնք շինելուց, ներկայ հոգաբարձութիւնը ձեռնարկել է եկամուտի աղբիւրները աւելացնելու գործին և ծրագրել բաց անել 7-րդ դասարան մասնագիտական բաժնով։ Այդ եկամուտով հոգաբարձութիւնը մտադիր է դնել դպրոցական գործը ամենալաւ հիմքերի վրա, որպէսզի միջնակարգ կրթութիւնը լինի ազատել կատարեալ և դպրոցը միջոց ունենայ գաւառական դպրոցներին տալու պատրաստված ուսուցիչներ։ Մենք հաւատում ենք, որ ներկայ հոգաբարձութիւնը այդ բոլորին կը հասնի, որին երաշխաւորում է ներկայ դպրոցական տարվայ խաղաղ կեանքը, որը պարտական է հոգաբարձութեան և ուսուցչական կազմի համերաշխ գործունէութեան։ Այս ամենը իրրև հայելի դնելով հասարակութեան առաջ, թող նա ուշի ուշով քննէ և իմանայ թէ ինչ տեսակ անձնաւորութիւններ են ընտրվում ամբողջ մի թեմի գլխաւոր դպրոցը կառավարելու համար։

Ցանկանում ենք ի սրտէ եռանդուն հոգաբարձութեանը աջողութիւն։

Գ. Աղազադեանց

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երևան, ապրիլի 30-ին

Ապրիլ ամսի 10-ին Իրևանում, նախաձեռնութեամբ մի խումբ տիկինների, օրիորդների և պարոնների, կայացաւ երեկոյթ յօգուտ յատկապէս Զանգեզուրի գաւառի հայ և թուրք սովեալների։ Ուղարկելով խմբագրութեանդ այդ երեկոյթից ստացած զուտ արդիւնքը 583 ր. 66 կ., խնդրեմ յայտնցնել այդ գումարը ըստ պատկանելոյն և «Մշակի» համարներից սէկում գետեղել երեկոյթի համառօտ հաշիւը։

Մուտք՝ տոմսակների վաճառումից 520 ր., նուէրներից 137 ր. 20 կ., բուֆետից 295 ր. 60 կ., կիօսկի փայտերի վաճառումից 4 ր.։ Ընդամենը 956 ր. 80 կոպէկ։

Ծախք՝ կլուբի դահլիճին 75 ր., շորեր պահելուն 25 ր. 10 կ., մուզիկայի 25 ր., սաղմոնգարի 12 ր., ծաղիկների 18 ր. 20 կ., հայ դրամատիկ խմբին 80 ր., կիօսկիզ շինելուն 27 ր. 33 կ., կանդիսերին 13 ր., խմիչք 34 ր. 6 կ., ժեռոնների 8 ր. 30 կ., մարկաների 28 ր. 40 կ., մանր ծախսեր 26 ր. 75 կոպ.։ Ընդամենը 373 ր. 14 կոպէկ։

Նուէրներ տուել են յարգոյ պարոններ՝ Երևանի նահանգապետ կոմս Տիղենհաուզէն 5 ր., Գ. Եղանց 3 ր., Գ. Գուլամիրեանց 1 ր., Ա. Ափրիկեանց 20 ր., Ադ. Մելիք-Ադամաեան 11 ր. 90 կ., Ակ. Թադէոսեան 50 կ., Պ. Խուդաբաշեան 1 ր. 90 կ., Կ. Օհանեան 1 ր. 25 կ., Իս. Մելիք-Ադամաեան 3 ր. 80 կ., Ս. Աւետիսեան 10 ր., Ալէք. Ակօպեան 12 ր. 25 կ., Ս. Ամիրեան 50 կ., բժ. Աբ. Տէր-Աւետիքեան 10 ր., Իր. Շահնազարեանց 5 ր. 75 կ., Կ. Մելիք-Ադամաեան 6 ր. 90 կ., Գր. Ամիրեան 2 ր., 25 կ., Վաս. Միրզայեան 8 ր. 80 կ., Խուդիբեկ Էլչիբեկեանց 21 ր. 80 կ., Կ. Ափրիկեանց 5 ր., պ. Արշ. Ակօպեանց ձրի տպել է տոմսակները, ալիքները և պրօգրամմեր, որ է 12 ր. 70 կ., Եր. Գէորգեանց 2 ր. 50 կ., ինժ. Կալաուզով 2 ր., 10 կ. և մի ոմն 1 ր.։

Շնորհակալութիւն նուիրատու պարոններին և երեկոյթը կազմող յարգոյ տիկիններին և օրիորդներին։

Խմբի կողմից՝ Գր. Տէր-Խաչատրեան

—

Թիֆլիս, մայիսի 2-ին

Տէր խմբագիր, պատիւ ունեմ ձեր միջոցով յայտնելու յարգելի հայ հասարակութեանը, որ շնորհակալութեամբ ստացել եմ նուէրներ Ղազվինի հայ գրադարանի համար 101 հատ գիրք 30 ռուբլի 28 կոպէկ արժողութեամբ, հետեւեալ նուիրատուներից.

Կենտրոնական գրավաճառանոցից 48 հատ, Գուտանեբերգից 25 հ., պ. Զաքար Գրիգորեանից 4 հ., «Մուրճի» խմբագրութիւնից 4 հ., «Մշակի» խմբագրութիւնից 12 հ., «Աղբիւր, Տարազից» 7 հ., պրոֆիզոր Ա. Մարուխանեանից 1 հատ։ Ընդամենը 101 հատ։ Խնդրում եմ բոլոր յարգելի հեղինակներին, հրատարակիչներին և գրավաճառներին, որոնք ունեն սիրաբաղդ նուէրներ, ան Գուտանեբերգ գրավաճառանոցին, որի միջոցով կը հասնէ Ղազվին։

Ի տեղի գրադարանի վարչութեան

Պետրոս Տէր-Յովակիմեանց

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի Փոխարքան յարգել է Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան միջնորդութիւնը և թոյլատրել է Թիֆլիս քաղաքում հանգանակութիւն բանալ յօգուտ Ռուսաստանի և Կովկասի սովեալների այն պայմանով, որ Ռուսաստանի համար նուիրած գումարները ուղարկվին Կենտրոնական Նպաստավատոյց Ցանձնաժողովին, որը գործում է պատաս սէկրէտար Երմօլովի նախագահութեամբ, իսկ Կովկասին հասանելիք նպաստները—համապատասխան նահանգապետներին։

Երևանի նահանգապետը Կովկասի Փոխարքայի առաջ միջնորդութիւն է յարուցել, որ համակայսերական մասակարարական դրամագլխից 470 ռուբլի տալի Երևանի նահանգի Սարուխանլու գիւղի բնակիչներին, որոնք ջնասվել են անցեալ տարի անբերրութիւնից, այն պայմանով, որ այդ գումարը գիւղացիները ծածկեն երեք տարվայ ընթացքում, հաշուելով 1908 թւից։

—

Մանահին կայարանում անցեալ տարվայ դեկտեմբերի վերջերից սկսած սկսել են նկատել վագոնից ապրանքների ատիճանաբար գողանալը։ Գողերը մէկ դէպքում սղցում էին վագոնների պատերը, իսկ մի ուրիշ դէպքում լայնացնում էին պլօմբի ծակը, ժամանակաւորապէս հանում էին, իսկ ապրանքը գողանալուց յետոյ թելը անց էին կացնում պլօմբում և հուպ էին տալիս քարփաթինով։ Վերջին միջոցը շատ աջող էր գործածվում և կատարված գողութեան հետք չէր մնում։ Երկու շաբաթ առաջ պահակ զինուորը պահակխմբի հրամանատարի հետ կայարանում շրջելիս, պատահմամբ ձերբակալեց մի հրեայի երկու հակ բրդէ ապրանքով, որը աշխատում էր ապրանքը կայարանի սահմաններից դուրս հանել։ Ձերբակալվածին հարցաքննելուց պարզվել է, որ ատիճանաբար գողութիւնը կատարվում էր ապրանքների 2 պահապանների միջոցով, գնացքները միացնողի աջակցութեամբ։ Բոլոր երեքն էլ բանտարկված են։ Բանտարկվածների ընակարաններում գտել են ահագին քանակութեամբ միատեսակ իրեր, որոնք են՝ հագուստներ, վերմակներ, հագուստի կտորներ և այլն։ Յետագայ խուզարկութիւնների ժամանակ գտնված են մանագիտական գործիքներ, որոնցով օգտվում էին գողերը։ Անցեալ դեկտեմբերի վերջերից սկսած մինչև այժմ գողացված են 10,000 ռուբլու ապրանք։ Ենթադրութիւն կայ, որ նոյն կայարանում գողութիւն էր կատարվում նաև անցկացրած ապրանքներից, ընդհանրապէս 30,000 ռուբլու։

—

Ղազախի գաւառի Ղլիչքենդ գիւղի լիազօրները միջնորդութիւն են յարուցել, որ իրագործվի Թիֆլիսի նախկին վաճառականական աւագ Ե. Ա. Դաւիդովի կտակը, որի համաձայն դպրոց պէտք է հիմնվի իրանց գիւղում, որի համար գիւղացիք հատկացրել են հողաբաժին յատկացնելու, ջրանցք կառուցելու և ճանապարհ շինելու։

—

Վրաստանի էկզարխ գերապատիւ Նիկօնը գալիք շաբաթում մտադիր է ուղևորվել Պետերբուրգ։

—

Գեներալ Ֆադէյեվը մեկնեց Բագու։

—

Կ. Վ. Վենէգկին դիմել է Թիֆլիսի նահանգապետին և խնդրել է թոյլատրել նրան հրատարակել Թիֆլիսում վրացերէն լեզուով երգիծաբանական շաբաթաթերթ «Մասխարա» անունով։

—

Թիֆլիսի ելեքտրաքաշի արհեստակցական ընկերութեան քարտուղար Կօրնէլս

պետական դիւանատան։ Մինիստրների խորհուրդը որոշել է խնդրել բոլոր մինիստրներին ու գլխաւոր-կառավարիչներին իրանց օրինագրերը Դումային ներկայացնելիս իւրաքանչիւր օրինագծից 250 օրինակ ուղարկել պետական դիւանատան։

—

Դօնի շրջանի պառամաւորը (կազետ) Պետրօվսկին հետեւեալ վրդովեցուցիչ հեռագիրն է ստացել Ալէքսանդրովսկ—Գրուշէվսկուց. «Ապրիլի 24-ին տեղական հարիւրեակի կազակները գնդակահարութեան ենթարկեցին խաղաղ քաղաքացիներին. մէկ-մէկ ցրված քաղաքում՝ նրանք մտրակներով ծեծում էին կանանց։ Մէկը սպանված է գնդակով, երեքը վիրաւորված է, իսկ մտրակներով ջարդված-ների թիւը շատ-շատ է։ Անժիջապէս հաղորդեցինք Մսօլիպինին և ատամանին։ Մինչև այժմ ոչ մի մրցոց ձեռք չէ առնված։ Անկարգութիւնները դեռ ևս շարունակվում են. ապրիլի 25-ին մտրակներով այնքան ծեծեցին երկու բանւորների, որ նրանք ուշաթափ եղան։ Ցայտնեցէք այդ մասին զինուորական մինիստրին։ Անհրաժեշտ է խիստ քննութիւն նշանակել։ Պառամաւոր Վօրոնկով»։ Պառամաւոր Պետրօվսկին հեռագրով անմիջապէս խնդրել է զինուորական մինիստրին ընդունել իրան։ («ՐԲԿԳ»)

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ արտաքին գործերի մինիստր Իզվոլսկին յունիս ամսում այցելութիւններ է տալու Արևմտեան Եւրոպայի մի քանի մայրաքաղաքներին։

—

Ապրիլի 27-ին ռուս ժողովրդի միութեան թէյատներում երկու ժողով է կայացել միութեան միջոցները աւելացնելու նպատակով խորհրդակցելու, որովհետև ռազմիկներից շատերը հրաժարվում են կատարել իրանց վրա դրված պարտականութիւնները միութեան դեկավարներին և Դումայի աջակողմեան անդամներին պահպանելու, նոյնպէս և միութեան թղթակիցները տարածելու և ագիտացիա անելու բանւորների մէջ։ Միութեան դրամարկղի դատարկվելը սպառնալի բնաւորութիւն է ընդունում։ Ժողովներում որոշել են շնորհաւորական հեռագիր ուղարկել Մօսկվայի դաշնակցականների միութեան համագումարի նախագահին և նրա օգնական Պուրիշկեվիչին և առաջարկել համագումարում հարց դարձնել կառավարութիւնից ռուս ժողովրդի միութեան համար նպաստ խնդրելու, իբրև մի միակ հայրենասէր կազմակերպութեան համար, որը կռիւ է մղում «կլամօլայի» դէմ ոչ միայն Ռուսաստանի կենտրոնում, այլև ծայրագաւառներում, օրինակ, Կովկասում, որտեղ երկու օր առաջ բացվել է միութեան մի նոր բաժանմունք։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մայիսի 2-ին, երեկոյեան ժամը 9-ին, Նախալովկայում, կամուրջի մօտ մի անյայտ գիմնազիստ ատրճանակից կրակել է մի անյայտ ոստի վրա։ Երկուսն էլ անյայտացել են։

—

Մայիսի 2-ին, երեկոյեան ժամը 10-ին, Վիննի շրջում կանգնած պահակի զինուորը նկատեց մի անյայտ երիտասարդի, որը գալիս էր նրա դիմացի կողմից։ Պահակախմբի օֆիցերը ասաց նրան. «стой, руки вверхъ» և ուղարկեց ունտեր-օֆիցերին խուզարկելու։ Անյայտ երիտասարդը, նկատելով իր մօտ զինուոր է գալիս, հանեց գրպանից ատրճանակը և 2 անգամ կրակեց ու ծառը կերծով վիրաւորեց ունտեր-օֆիցեր Միխայիլ Պատրօվին և անյայտացաւ։ Փախչող երիտասարդ չարաղդի վրա պահակախմբի օֆիցերը մի քանի անգամ կրակեց, բայց անհետևանք անցաւ։

—

Մայիսի 2-ին, գիշերվայ ժամը 11-ին, Ուզէնի փողոցում ընակվող Արսենիյ Օսլօմսկուը իր կնոջ հետ վիճելիս ձգեց նրան երկրորդ յարկի պատշգամբից։ Կնոջը անգամ գրութեան մէջ տարել են Մէրաչէյսկի հիւանդանոցը։ Արսեն Օսլօմսկուը բանտարկված է։

—

Մայիսի 2-ին, ցերեկվայ ժամը 3-ին, մի փուքրօնչիկ ցանկանալով իր փուքրօնում լծած 4 ձիերին ջուր խմցնել, Իսարլօվսկի փողոցով քշեց դէպի Կուբ գետափը։ Ուժեղ հոսանքով փուքրօնը ձիերի և կառապանի հետ միասին շուռ է եկել, տարվել է գետի մէջ տեղը, ուր և ջրասոյզ է եղել։

—

Մայիսի լոյս 3-ի գիշերը, Նիլզաւտոնսկի և Նեկրասովսկի փողոցների անկիւնում, գնդ.-մայոր Ֆերլիդան բեգ Վեղիրովի խոնարհ Հասան Ալի-բեգ-օղլին, կողոպտելու նպատակով դանակով վիրաւորել է իրան գնդապետ և սպասաւորին, որից յետոյ սկսել է փախչել, բայց ձերբակալվել է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

—

Մենք դարձեալ առիթ ունեցանք խօսելու այս ժրաջան ընկերութեան մասին։ «Մշակի» անցեալ սեպտեմբերի համարներում մի քանի յօդուածներով կանգ ենք առել այդ ընկերութեան գործունէութեան վրա. այս անգամ առիթ տալիս է նոյն ընկերութեան հրատարակած «տեղեկագիրը», որը, չը գիտենք, ինչու այսքան ուշ ստացվեց. տեղեկագիրը տպագրութեան պատրաստ էր դեռ անցեալ օգոստոսին, բայց թէ ինչու այս ապրիլին է ստացվում, այդ երևի նրանից է, որ այդ ընկերութեան վարչական կազմի մէջ մեծ փոփոխութիւններ են եղել։

Ընկերութիւնը Արպատական զանազան գիւղերում պահել է 12 դպրոց. այդ դպրոցներից օգտվել են 20-ից աւելի գիւղեր. ուսումնական տարին եղել է (1905—1906) ամենաշատը 7 ամիս տևողութեամբ. այդ 12 դպրոցներում յաճախող երկսեռ աշակերտների ամենամեծ թիւը եղել է 550 (ձմեռվայ 3 ամիսներում), կանոնաւոր յաճախողները եղել են 450 հոգի։ Դպրոցներն ունեցել են մինչև չորս պատրաստական դասարաններ. չորրորդ պատրաստականի հայերէնի դասագիրքը եղել է Տէր-Ղևոնդեանի դ. տարի մայրենի լեզուն։ Ծրագիրը մեծ մասով նման է եղել մեր ծխական դպրոցների ծրագրին. առարկաները նոյնպէս։ 600 տուն խեղճ գիւղացիներ, որոնց մի մասը թրքախօս, օգտվել են այդ դպրոցներից. այս բանը եղել է ձրի. ոչ մի գիւղ, թէև նրանք կարող լինեն, մինչև այսօր չէ հասկացել, որ ինքը պէտք է նպաստի իր որդիների կրթութեանը։ Միայն մի քանի գիւղերում դասական իրերը վճարով են եղել. այն էլ մեծ դժուարութեամբ։

Այդ 12 դպրոցներից 7-ը գտնվում են իրար մօտիկ Ուրմիա և Բարանդուզ գաւառներում. դրանք էլ միայն ենթարկվել են ընկերութեան դպրոցների տեսչի հսկողութեան. միւս 5 դպրոցները տեսչի երես չեն տեսել, որովհետև շատ հեռու են ընկնում և ընկերութիւնը այդ մասին ոչ մի կարգադրութիւն չէ արել։ Ուրմիայի շրջանի 7 գիւղերի դպրոցների հսկողութիւնը անցեալ 1905—06 ուսումնական տարում յանձնված էր ճեմարանաւարտ Գ. Իսքէնդէրեանին, որը 15 երկսեռ ուսուցիչներով պաշտօնավարում էր այդ եօթ դպրոցներում. տեսուչը ազատ է եղել դասերից և շրջունակ հսկել է դպրոցների վրա։

Ընկերութեան այս լայն գործունէութեան մէջ նիւթական մեծ աշակցութիւն է անում պ. Տ. Աֆրիկեանը. նա հոգում է ամբողջ 38,634 դրամ, բիւրժէի էկսից աւելին, 20,000 դրամ, ռուսական փողով լինում է 3400 բուբլի. բիւրժէի մնացած մասում մտնում են պ. Ա. Մելիք-Ազարեանի և պ. Տէր-Օհանեանի մի-մի դպրոցի նպաստ, մօտ 500 բուբլի։ Գոյութիւն ունի և մի «Արամ Ղազարեան» կապիտալ, որի դրամագլուխը 9000 բուբլի է և որի տոկոսներով յատկապէս մի դպրոց է պահվում Սովուղ-Բուլաղի Դարալաք թուրքական գիւղում։

Պ. Աֆրիկեանը, ինչպէս լսում ենք, մտադիր է սահմանափակել իր դպրոցների թիւը Արպատականում, ուր խոստացել էր 20-ի հասցնել նրանց թիւը. դրա փոխարէն նա արդէն սկսել է դպրոցներ բանալ Աբարանում։ Այժմ նրա դպրոցների թիւը 8-ի է հասել, որոնց հսկողութիւնը յանձնված է Հայուհեաց Ընկերութեան։

Ուրմիայում հիմք է դրվել «Սահակ-Մեսրոպեան» անուն գրադարանին, որը հետզհետէ պիտի ճոխանայ և ծառայէ այդ շրջանի դպրոցների առաջադիմութեան գործին։

Ընկերութեան գոյութիւնը թէև 15 տարի է, բայց նրա գործունէութիւնը սկզբում կենտրոնացած է եղել Թաւրիզում և եղել է շատ համեստ։—Նրա բացած գիւղական դպրոցները 8 տարվայ գոյութիւն ունին թէև, բայց շնորհիւ տիրացու ուսուցիչների և տեղական վերին ատիճանի անպաստ պայմանների քիչ արդիւնք են տուել. այս երկու իրողութիւնների դէմ ընկերութիւնը չէ կարող կռուել, որովհետև բիւրժէն սահմանափակ է և միայն անկարող ու տիրացու անձնաւորութիւններ կը հաճայնեն այդպէս քիչ վարձատրութեամբ ծառայել (ամենաշատ ռոճիկը 250 բուբլուց չէ անցնում)։ Անցեալ ուս. շրջանի սեսուչը անհրաժեշտ է համարել 5—6 տիրացու ուսուցիչների արձակել. սակայն, ինչպէս յետոյ լսեցինք, տեսչի հեռանալուց յետոյ նրանք նորից վարձվել են։ Ահա այս է ընկերութեան թոյլ կողմը։

Թաւրիզցիներին շատ լաւ յայտնի Մայրիկը (տիկ. Սրբուհի Աժատունի) երկար տարիներից ի վեր եղել է ընկերութեան գործունէութեան ղեկավարը. եռանդի շնորհիւ ամեն ինչ նրա ձեռքում է կենտրոնացած եղել. նրա գործունէութիւնը շնորհակալութեան արժանի է։ Անցեալ տարի նա թողեց նախագահութեան ծանր պաշտօնը և մնաց սոսկական անդամ։ Իբրև անխուսափելի երևոյթ պէտք զգացվեց աւելի երիտասարդ ոյժերի մասնակցութեան. անցեալ տարի հաղիւ կարողացան նոր վարչութիւն ընտրել. դրանցից մի քանիսը երիտասարդ տիկիններ են. յուսալի է, որ նրանք (եթէ դժուարութիւնից դեռ չեն փախել և հրաժարվել) կը կարողանան Արպատականի կրթական գործը լաւ առաջ տանել խեղճ ու հարստահարված գիւղերում։

Ի պատիւ այդ մի խումբ տիկինների պիտի ասել, որ նրանց ցոյց տուած երկարամեայ գործունէութիւնը շատ գնահատելի է։ Թաւրիզը հաղիւ 800 տուն հայ բնակիչ ունի. բայց նրանք շատ բաներում եռ են թողել մեր գաւառական և նոյն իսկ նահանգական քաղաքները։ Այդ ընկերութիւնը պահել է կարուձևի արհեստանոցներ, մանկապարտէզներ, գրադարան-ընթերցարան և այլն. մեր ոչ քաղաքում կանայք ցոյց են տուել նման գործունէութիւն (Թիֆլիսը ի նկատի չեմ առնում)։ Վերցնենք շատերից մէկը։ Ախալցխան, որ տասնեակ հազար հայ բնակչուհի ունի, արդէ՞ն մի չնչին մասը Թաւրիզի Հայուհեաց ընկերութեան գործերի. ոչ։ Նորէնոր սկսել են զարթնել մեր քաղաքի տիկինները. կազմել են մի փոքրիկ շրջան կանանագրութիւն են մշակել և ուղարկել հաստատութեան, որը գրժբախտաբար, ամիսներից ի վեր ձգձգվում է։ Ցանկանում ենք աջողութիւն։ Թող Թաւրիզի մի բուռն տիկիններն օրինակը նախանձելի լինի Կովկասի հայկական քաղաքների համար. մենք դիտմամբ շեշտում ենք այս կէտը։

Աջողութիւն ենք ցանկանում և Թաւրիզի Հայուհեաց ընկերութեանը։

Գալուստ

Ախալցխա, 13 ապրիլի

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի։ Ի նկատի ունենալով, որ արդէն հետևեց կայսերական հրամանը՝ բարձրագոյն զինուորա-քրէական դատարանին յանձնելու Պօրտ-Արտուրը եապոնացիներին յանձնող գեներալ-լէյտենանտ Ստեսէլին, Ֆոքին և Սմիրնօվին ու գեներալ-մայոր Ռէյսին, բոլոր նիւթերը յանձնվեցին զլխաւոր զինուորական դատախազին՝ ուսումնական ակտը կազմելու համար։

Հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութիւնը առաջարկել է պետական կալուածների ու գոյքերի Պրիմորեան վարչութեան—օգոստոսի 1-ին վաճառքի հանել կապալով տալու համար ծովային ձկնորսական հողամասերը։

ՄԱԴՐԻԴ, 1 մայիսի։ Պարլամենտը բացվեց ապրիլի 30-ին սենատի և պալատի ամբողջ կազմով և թագուհի կայսրուհու ներկայութեամբ։ Գահական ճառը շեշտում է, որ ցանկութիւն կայ պահել սերտ բարեկամական կապեր Ֆրանսիայի և Մեծ-Բրիտանիայի հետ. ասում է, որ Սպանիան Հաագա է գնում անկեղծօրէն ցանկանալով աջակցել կօնֆերենցիայի աջողութեան։

ՎԻԵՆՆԱ, 1 մայիսի։ Ամբողջ Աւստրիայում տեղի են ունենում բէյխստագի ընտրութիւնները ընդհանուր ընտրողական իրաւունքի հիմունքով։ Առայժմ ընտրված են 213 պատգամաւոր, որոնց մէջն է պարոնների տալատի առաջին նախագահ իշխան Աուէրս-Նէրգը։

ԲԵՐԼԻՆ, 1 մայիսի։ Բէյխստագը երրորդ ընթերցումով ընդունեց Միացեալ-Նահանգների հետ կապված առևտրական դաշնագիրը։

ԼՕՆԴՕՆ, 1 մայիսի։ «Դէյլի-Մէյլին» Կալկաթայից հաղորդում են, որ այնտեղ մօտ 2000 ? ինդուսներ մեծ միտինգ են գումարել կառավարութեան գործադրած բեղբեսխաների դէմ բողոքելու համար։

ՊԱՐԻԶ, 2 մայիսի։ Երէկ առաւօտեան ձախակողմեան ֆրակցիաների պատուիրակները քննում էին հերթական գործերին անցնելու բանաձևը։ Եկաւ Կլէմանսօն և հրաժարվեց միանալ Դէլկասէի բանաձևին և բացատրեց, որ ցանկանալով պահպանել սինդիկատների իրաւունքները անձեռնմխելի, նա մտադրութիւն ունի պատասխանատուութեան ենթարկել աշխատանքի ֆեդերացիայի յեղափոխական պարագլուխներին և չի վերադարձնել արձակված պաշտօնեաներին։ Ձախակողմեանների պատգամաւորութիւնը մերժեց Դէլկասէի բանաձևը և ընդունեց Կօդէի բանաձևը, որը հաւատ է յայտնում, թէ կառավարութիւնը կը ճնշէ ֆեդերացիայի անդամներից մի քանիսի անիրաւական պրովոկացիան։

ԿԻԵՎ, 2 մայիսի։ Բանւորական հարցի նը-կատմամբ էլէքտրօ-տեխնիկական համագումարը կարիք յայտնեց—փոխադարձաբար ապահովագրելու էլէքտրաբարշի բոլոր բանւորներին և ծառայողներին և շուտափոյթ իրականացնելու Ռուսաստանում միջնորդ հաստատութիւնները արդիւնաբերական էլէքտրոտեխնիքական ձեռնարկութիւններում։

3 մայիսի

ԲԵՐԼԻՆ, 2 մայիսի։ Բէյխստագը երրորդ ընթերցումով ընդունեց նախահաշիւը։ 6-յ-տարարվեց արձակուրդ մինչև նոյեմբերի 8-ը։

ԼՕՆԴՕՆ, 2 մայիսի։ Նախահաշիւը ընդունվեց երկրորդ ընթերցումով 304 ձայնով ընդդէմ 54-ի։

Մամուլը տեղեկութիւններ է ստացել, որ Հնդկաստանում ապստամբութիւնը ընդարձակ ծաւալ է ստանում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մայիսի։ Այսօր բացվեց առևտրի մինիստրի նախագահութեամբ ռուսական և իտալական կառավարութիւնների պատգամաւորների կօնֆերենցիայի առաջին նիստը, որը ընելու է Ռուսաստանի և Իտալիայի միջև նոր առևտրական պայմանագիր կապելու հարցը։

Եղած տեղեկութիւնների համաձայն ապրիլ ամսում Սիբիր են գաղթել ընդամենը 59305 մարդ երկու սեռից. բացի սրանից գաղթել են նաև 25255 խոշոր։ Նոյն ժամանակամիջոցում Սիբիրից վերադարձել են 11687 խոշոր և 78 ընտանիք։

ՊԱՐԻԶ, 2 մայիսի։ Պալատը 460 ձայնով ընդդէմ 75-ի մերժեց Վալիանի բանաձևը, չընդունեց մի քանի հերթական յայտարարութիւններ, ի թիւս որոնց աշխատանքի ֆեդերացիայի անդամների ժամանակաւորապէս ազատելու պահանջը։ Ապա 351 ձայնով ընդդէմ 214-ի ընդունվեց Մօժանի բանաձևի առաջին մասը, որը վստահութիւն է յայտնում կառավարութեան։ Նիստը փակվեց։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Հօրօնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ.

Բ. Ա. ՆԱԻ ՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վիներական (սիֆիլիս) մեզաստ. հ.։

Կ. Մ. ԶԻԿՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Մ. Դ. ԱՒՏԻՄԵԱՆ—11—12 ժ. մորթու, վիներակ. վերաբուժութիւն։

Ա. Մ. ՓՈՒՐԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկանաս։

Ե. Ի. ԳԶԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջ, քիթ և կոկորդի

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։

ԿՆՈՐԻՇԵՆ Ա. Ի. ՇՂԵՐԲԻՆԻԱ—1½—2 ժ. մանրաբուժութիւն։

Վճարը 50 կ.։ չքաւորները ձրի։ Համախորհրդ (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“

գրավաճառանոցում ծախվում է

ՄՈՒՐԱՑԱՆԻ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

առաջին հատորը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոյի Ագռաւը

Առաքեալը

և

Խորհրդաւոր միանձնուհի

ԳԻՆՆ Է 1 Ր. 50 ԿՈՊ.

պոստի ծախքով 2 բուբլի

2—3

ԷԺԱՆԱԳԻՆ

գրադարանների Վարչութիւնը ձեռնարկելով գիւղական գրադարանների համար գրացուցակներ կազմելու գործը, սրանով դիմում է բոլոր հայ հեղինակներին, թարգմանիչներին և հրատարակիչներին, խնդրելով ուղարկել վարչութեան երկուական օրինակ իրանց գրքերից գրախօսելու և լաւագոյնները գրացուցակների մէջ մտցնելու։ Հասցէն՝ Тифлисъ, Вельяминовская ул. № 8. Дешевая библіотека-читальня.

(չ. շ.) 5—10

Լոյս տեսաւ

ԷԴՈՒԱՐԴ ԲԵՐՏՐԱՆ

ՄԵՂՈՒՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Թարգմ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

76 նկարով և փեթակի երիք գլխաւոր տեսակների գծագրական քարտերով։

ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ

Վաճառվում է Կովկասեան Շերամապահական կայարանում։

ա. օ. 1—10

Սալմաստի Ղալջա գիւղի ծխատէր Մարգիս քահ. Տէր-Մարտիրոսեանցը մի քանի ամիս է, ինչ Թիֆլիս է եկել աչքերը բժշկելու և խիստ անապահով դրութեան մէջ է։ Մանկահասակ որդիները ծննդավայրում համագիւղացոց խնամքին են մնացել միայն։ Մեծ որդի՝ Մարտիրոս Տէր-Մարգսեանը անյայտացել է. աշխատող ձեռքից զուրկ՝ դիմում են հայ հասարակութեան, որ նիւթական օգնութիւն հասցնեն իրանց, մինչև հօր աչքերի բուժվելը։ Կարելի է ուղարկել 6 քաղաքմ. Հրեշտակապետաց եկեղեցի, կամ «Մշակ»-ի խմբագրութեան։

2—3

ԲԺՇԿԱՊԵՏ

Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Մայիսի 1-ից վերսկսում է հիւանդների ընդունելութիւնը Պետերգօրսկում (հանքային ջրերը)։

Հասցէն՝ Д-ръ В. Арцруни Верхн. бульваръ, д. кн. Гирей.

(Ե. ու. կ.) 1—100

Ժողովրդական համալսարանների Թիֆլիսի ընկերութեան հայկական սեկցիան սրանով յայտարարում է, որ հարկաւոր են ուսուցիչներ համալսարանի դասընթացների համար—սկզբ հայոց լեզուի և միւսը թուաբանութեան համար։ Վարձատրութիւնը իւրաքանչիւր մի ժամ դասի համար մէկ բուբլու ծանկացողները թող դիմեն մինչև ապրիլի 28-ը հետեւեալ հասցէով.

Общество Армянскаго сельскаго хозяйства, лекціи народн. университетъ։

Մի երիտասարդ, որ աւարտել է Թիֆլիսի տեխնիքական դպրոցը, որոնում է երեկ պաշտօն գրասենեակներում, մագազիններում (գործակատարի պաշտօն), զանազան տեխնիքական մասերում։ Համաձայն է գնալ նաև ուրիշ քաղաքներ։ Ունի լիակատար երաշխաւորութիւն։ Հասցէն՝ Сурпъ-Карапетская ул. № 35 д. М. Мирзоевой, Г. Мирзоеви։

1—3

ԱՄԱՐԱՆՈՑ

Զարաքիլիսում ամեն յարմարութիւններով, 5 սենեակ, ջրանցքով, էլէքտրական կոչնակով. գինը ամառվայ համար 400 բուբլի։ Նոյն ամառանոցը իր այգիով ծախվում է։ Դիմել ամառանոցատէր Մելիք-Կարագեօզեանին, Ղարաքիլիսա։

(Ե. ու.) 2—8

Լոյս տեսաւ

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս-Ի

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԿՆԵՐ

գիրքը. թուղթն ընտիր, տպագրութիւնը սիրուն, 112 էջ։

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊԷԿ

Հարցնել Թիֆլիսի գրախանութներում, ուր վաճառվում են նոյնպէս. 1) Խուլ Խաչիկ 25 կ.։ 2) Քաջ Աղասի 25 կ.։ 3) Ժամանակը ոսկի 40 կ.։ 4) Սրտից 9 պատմութիւն 40 կ.։ 5) Սասունցի Ցոմսան 30 կ.։ 6) Երկասիրութիւններ 50 կ.։ 7) Գալօ ափօ, Խաչան 12 կ.։ 8) Աստուած չը ճանաչող 10 կ.։ Շէն թագաւորի աղջիկ 25 կ.։ 11) Երկու աղբերացեղ 30 կ.։ 12) Հեքեաթներ 30 կ.։ 13) Անտեռ աշխարհ 8 կ.։ 14) Աստուած աղքատի կերպում 20 կօպէկ։

Մեծ զումարով գնողները դիմելու են Քամալեանց Ս-ին՝ Ներս. զպրոցում։

(Ե. հ. կ.) 17—20

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնն ամեն օր

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12

Երեկոյեան » 5-ից մինչև 7

Վեկամինովսկայա փողոց № 8.

(Ե. հ. շ.) 54—100

ԱՃՈՒՐԴ

Ներսիսեան Հայոց Հովոր Դպրոցի Հոգաբարձութիւնը,

այս տարվայ մայիսի 6-ին, կիրակի ցերեկվայ ժամը 12-ին,

ԴՊՐՈՑԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

ճառագել է

ԱՃՈՒՐԴ

կրկնաբդով կապալով տալու Ռուսկի և Օլդասակի բաղարում գտնված այրված շէնքի հիմնական վերանորոգութեան մի յարկանի շինութեան կառուցումը։ Շինութեան յատակագիծը, նախահաշիւը և պայմանագիրը կարելի է տեսնել դպրոցի խորհրդարանում ամենայն օր, բացի պօներից, առաւօտեան ժամը 10-ից մինչև 2-ը։

(Հ. կ.) 1—2

ՀՐԱՒԷՐ

Բեթղեհէմի ս. Աստուածածնի երէցփոխի ժամանակամիջոցը լրացած լինելու առիթով, ամսիս 6-ին, կիրակի, առաւօտեան ժամը 10-ին, առաջին անգամ ժողով է լինելու նոր երէցփոխ ընտրելու. ուստի սրանով հրաւիրում եմ յիշեալ եկեղեցու մեծապատիւ պ. ծխերին, որ նշանակված օրը և ժամին շտապեն եկեղեցի՝ ընտրութեանը մասնակցելու։

Գործակալ ա. մասին Թիֆլիսի՝

Գրիգոր քհ. Մանդակունի

1—2

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Իմ շուտ գործող մեքենաների

մասին

Ամեն մի աշխատող կին կամ աղամարդ 12 տարեկան հասակից կարող է օրական 1 ր. 50 կ. և աւելի արդիւնք ունենալ ինձանից գնված նորութեան շուտ գործող մեքենաների միջոցով։ Նախնական գիտելիքներ պէտք չեն։ Մեքենաներն այստեղ և եթէ կարելի է տեսնել։ Թելը ես եմ վաճառում և պատրաստ գործը, վարձատրելով կանխիկ փոխով, ընդունում եմ։ Բոլոր մանրամասն տեղեկութիւնները տալիս եմ ձրիաբար և սիրով իմ գրասենեակումս կամ պօստով։ Կովկասի մեկ ներկայացուցիչը լինում է Թիֆլիսում։ Դիմել՝ Тифлисъ, контора «скоровязальныхъ машинъ», Троицкая ул. 7, по сосѣдству съ глав. почтово-телеграфной конторою.

Զգուշացէք կեղծ մեքենաներից, որոնք զանազան անուններով առաջարկում են։

(Ե. չ. ու. կ.) 1—25

Վերա, Վակէից շատ մօտ, այգիների մէջ, ապագայ կաղնտակի կօրպուսից ոչ հեռու, «բաղեր» կոչված այգիների մէջ ծախվում են հողաբաժիններ 20—50 կօպ. քառակուսի սաժէն. կայ և առողջարար ջուր. ցանկացողները թող դիմեն Ց. Շահնազարեանին, «Խաթաբալյի» դրասենեակում, առաւօտեան 10—12 ժամը։

Այս տեղը աւելի մօտ է քաղաքի կենտրոնին, քան Նախալովկան, Դէլիքը, Մախաթի սարի լանջը և Նաթլուղի հողաբաժինները։

Կիրակի, ամսիս 6-ին, առաւօտեան ժամը 10-ին պէտք է գնալ հողերը տեսնելու, ուստի և ցանկութիւն յայտնողները պէտք է լինեն Ծղնեթսկի փողոցի վրա, ազնուականների ուսումնարանի մօտ։

(ու. կ. ե.) 1—3

„Գուտտենբերգ“

գրախանութում վաճառվում են

ԻՍԱՀԱԿ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻ

աշխատութիւններից հետեւեալները

Հայոց գիրը, պակված մրցանակով.	1 50
Համառօտ տրամաբանութիւն .	1 —
Դերմանիայի մանկավարժական բարձրագոյն հաստատութիւնները .	— 40
Ներսիսեան դպրոցի առաջին դպ. ճանապարհորդութիւնը . .	— 40
Երկր. ճանապարհորդութիւնը .	— 20
Աշակերտի յուշատետրը . .	— 30
Իմ օրագիրը . . .	— 25
Ծաղկոց (ման. պարտէզ) . .	— 10
Զգացմունք. աշխարհ («Վէրք Հայաստանի»-ի մասին) . . .	— 30
Ե. Սպէրի. Կին վիպագիր . .	— 15
Ստեփաննոս Պալասանեան . .	— 25
Սանահին	— 30
Գոշայ վանք Գոշ Մխիթարի կենսագրութեամբ	— 40
1500 տարի առաջ (հայոց տառերի գիւտը) . . .	— 20
Թարգմանութիւնները (գերմաներէնից).	
Գեսսալոցցի, Լինդարդ և Գերարուդ	1 50
Ժան Ժակ Ռուսօ, Էմիլ (թարգ. ընդարձակ առաջաբանով) ա. բ. հատ.	— 30
Պրօֆ. Ռատցել, Տարերք ազգագրութեան	— 50
Հուքսլէյ, Բնագիտութիւն . .	— 40
Նաւման, Էրզրում . . .	— 15
Հայրենազուրկ	— 50
Մ. Եօկայի, Ուրացողը . .	— 20
Տնային բժշկարան, հրատ. բժ. Գ. Բարեանի (ա. և բ. հատոր) .	2 60

Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ «Гутенбергъ» Г. И. Галустянцу. 1—3

ԵՐԿԱԹՈՒՂԱՑԻՆ ԳՆԱՑՔՆԵՐ

(Թիֆլիսից ժամանակով)

Թիֆլիսից դէպի Բաքու			
Արագ	6 ժամ	58 ր.	առաւօտ.
Մարդատար	9 »	3 »	»
Պօստատար	8 »	34	երեկոյեան
Թիֆլիսից դէպի Բաթում			
Պօստատար	1 ժամ	21 ր.	ցերեկվայ
Արագ	11 »	58 »	գիշերվայ
Մարդատար	1 »	3 »	»
Թիֆլիսից դէպի Բօրժոմ			
Մարդատար	9 ժամ	48 ր.	առաւօտ.
»	3 »	8 »	ցերեկվայ
Թիֆլիսից դէպի Երևան			
Մարդ ապրանք.	1 ժամ	43 ր.	ցերեկվայ
Պօստատար	1 »	8 »	գիշերվայ

„ՓԱՐՈՍ“

ՆԻԿ. ՄԱՏԻՆԵԱՆԻ

Լրագրա-գրախանութում

(Թիֆլիս, Երևանեան հրապարակ)

ՆՈՐ ԳՐՔԵՐ

«ՑԱՌԱՋ»-ի գրադարանի

1) Նեկրասով. Ինչպիսի կարգեր են հարկաւոր ժողովրդին և ինչպէս նրանց հասնել, 94 եր. 10 կօպ.
2) Արամայիս. Վնասակարը, 32 եր. 4 կօպ.
3) Զերնով. Դասակարգային կռիւ թէօրիայի շուրջը, 64 եր. 10 կօպ.
4) Խորամանկ կարգեր, 48 եր. 10 կօպ.

—

Բեն. Գրիգորեան. «Ազատութեան խանդ», բանաստեղծութիւններ, 64 եր. 20 կօպ.

Սկօբելցկնա. Ժողովների և միութիւնների ազատութիւնը, թարգմ. Կ. Ապրիլեան, 48 եր. 10 կօպ.

Ն. Ա. Ազբելով. Կանանց հարցը Եւրոպայում, (պատկերազարդ) թարգմ. օր. Նունէ Թայիրեանի, 96 եր. 25 կօպ.

Բ. Իշխանեան. Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, 135 եր. 40 կօպ.

Մ. Պ